


ԱՄ Փարթնրոգ Զոնասալթինգ Քասփեր
2011, Մայիս

Նախատեսվող «Խուլստուլի» եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերի հարակից համայնքների ելակետային սոցիալ-տնտեսական հետազոտություն



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ Փարթնրոգ
Զոնասալթինգ Զամփեր

Բովանդակություն

1	ՆԱԽԱԲԱՆ	3
1.1	ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.2	ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	4
1.2.1	Խնդիրներ եւ առաջադրանք	4
1.2.2	Մեթոդաբանություն	4
1.2.2.1	Տեղեկատվության հավաքագրում	5
1.2.2.2	Տեղեկատվության համակարգում եւ վերլուծություն	5
2	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ԽՈՒՍՏՈՒՓԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ	7
2.1	ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	7
2.1.1	Վարչակազմը	7
2.1.2	Ֆինանսավորում	8
2.1.3	Հողեր	10
2.1.4	Սոցիալական եւ ժողովրդագրական տվյալներ	13
2.1.4.1	Բնակչության սեռատարիքային բաշխվածքը	13
2.1.4.2	Աշխատանքային միգրացիա	18
2.1.4.3	Կրթություն	19
2.1.4.4	Այլ ժողովրդագրական տեղեկություններ	19
2.2	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
2.2.1	Սոցիալական ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունը	20
2.2.2	Հեռահաղորդակցություն եւ տրանսպորտային ծառայություններ	24
2.2.2.1	Հեռահաղորդակցություն	24
2.2.2.2	Ծանապարհներ եւ տրանսպորտային ծառայություններ	25
2.3	ԱՇԽԱՏՈՒԹ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	26
2.3.1	Մարդկային ռեսուրսներ	26
2.3.2	Եկամուտներ եւ աղքատություն	28
2.3.2.1	Աղքատության մակարդակը	28
2.4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	30
2.4.1	Գյուղատնտեսական արտադրանք	30
2.4.1.1	Հողագործություն	30
2.4.1.2	Անասնապահություն	34
2.4.2	Գյուղատնտեսական ենթակառուցվածքներ	37
2.5	ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39
2.6	ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ	40
2.7	ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	42
2.7.1	Բնապահպանական տեսանկյուն	42
2.7.1.1	Ուժեղ կողմեր	42
2.7.1.2	Թույլ կողմեր	43
2.7.1.3	Հնարավորություններ	43
2.7.2	Սոցիալական տեսանկյուն	43

2.7.2.1 Ուժեղ կողմեր	43
2.7.2.2 Թույլ կողմեր.....	43
2.7.3 Տնտեսական տեսանկյուն	44
2.7.3.1 Ուժեղ կողմեր	44
2.7.3.2 Թույլ կողմեր.....	44
2.7.3.3 Հնարավորություններ.....	44
2.7.4 Եզրակացություն.....	44
2.7.5 Ամբողջական SWOT վերլուծություն	45
2.7.5.1 Ուժեղ կողմեր	45
2.7.5.2 Թույլ կողմեր.....	45
2.7.5.3 Հնարավորություններ.....	46
2.7.5.4 Վտանգներ	46
2.8 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲՀՊՏ-ՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	46
2.8.1 Տեղական ինքնակառավարում եւ ֆինանսներ	47
2.8.2 Հողօգտագործում.....	47
2.8.3 Ժողովրդագրական իրավիճակ.....	47
2.8.4 Սոցիալական ծառայություններ եւ ենթակառուցվածքներ	48
2.8.5 Աղքատություն	48
2.8.6 Գյուղատնտեսություն	48
2.8.7 Սանիտարական վիճակ	49
2.8.8 Տուրիստական ներուժ	49
<u>3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</u>	<u>51</u>
3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազա.....	51

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՆԵՐՎՃԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, բնական տարածքների մեծամասշտաբ յուրացումը, կլիմայի փոփոխությունները բերել են Էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտմանը: Պատճառահետեւանքային ազդեցությունները ընդհանուր առմամբ ներառում են խոցելի բնական միջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական տեսակային կազմի նվազեցումը եւ Էկոհամակարգային համալիր մոտեցումների թերի կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (բնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) եւ ՄԱԶԾ կողմից ֆինանսավորվող, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ Բնության Համաշխարհային Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող **Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը** նպատակ ունի անդրադառնալ վերը ներկայացված խնդիրներին եւ գլոբալ առումով նպաստել կենսաբազմազանության պահպանմանը Հայաստանում: *Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ներառելու է հետեւյալ բաղադրիչները.*

1. Պահպանվող տարածքների օպտիմալացում արգելավայրերի հիմնադրման եւ գործարկման կարգավորիչ եւ ինստիտուցիոնալ շրջանակները բարելավելու միջոցով:
2. Կառուցվածքային հզորությունների զարգացում արգելավայրերի կառավարման մի շարք մոդելներ ներկայացնելու (որոնք հիմնականում բացակայում են Հայաստանի Բնության Հատուկ Պահպանվող Տարածքների (ԲՀՊՏ) կառավարման ներկա ռեժիմից) եղանակով:

Նախանշված գործողությունների իրականացման արդյունքում կզարգանա պահպանվող տարածքների համակարգը՝ ներառելով մինչ օրս թույլ ներկայացված Էկոհամակարգերը (լեռնամարգագետնային հողեր, ենթա-ալպյան բարձրադիր լեռներ, ալպյան լեռներ) եւ կենսաբազմազանությունը՝ միաժամանակ նպաստելով աղքատության հաղթահարմանը եւ տնտեսական ու ֆինանսական կայունության հաստատմանը ԲՀՊՏ-ների տարածքում:

«Չանգեզուր» եւ նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտությունը նպատակ ունի տեղեկություններ հավաքել, համակարգել, վերլուծել եւ տրամադրել թիրախված տարածքներում տեղակայված համայնքների սոցիալ-տնտեսական, իրավիճակի մասին միջառնակ բուն ԲՀՊՏ-ների վերջնական հիմնումը Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերում: ԲՀՊՏ-ների հիմնումն այս տարածքներում ինքնանպատակ միջոցառում չի հանդիսանում: Այն խնդիր ունի ապահովել բնապահպանական իրավիճակը (հատկապես Էնդեմիկ տեսակներին վերաբերվող) եւ զուգահեռաբար ապահովել կայուն սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ հարակից համայնքների բնակչության համար:

Ծրագրի իրականացման ներքո ԲՀՀ-Հայաստանի կողմից նախաձեռնվել է երեք առանձին մասերից բաղկացած լայնածավալ հետազոտություն՝ ա) *Գործող եւ նախատեսվող ԲՀՊՏ-ների շահառուների հետազոտություն*, բ) *ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակային հետազոտություն* եւ գ) *Տուրիզմի զարգացման պոտենցիալի գնահատում*: Սույն առաջադրանքը հանձնարարվել է «ԱՄ Փարթնըրզ Բոնասալթինգ Զամինի» ՍՊԸ հայկական խորհրդատվական ընկերությանը:

Սույն հետազոտությունը համապարփակ անդրադարձ կկատարի թիրախված 12 համայնքներում ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, ֆինանսական, կրթական, մշակութային ձեռնարկատիրական եւ այլ առումներով:

1.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.2.1 Խնդիրներ եւ առաջադրանք

Սոցիալ-տնտեսական հիմնարար հետազոտությունը ներառել է հետեւյալ հանձնարարականները.

1. Հավաքագրել համապատասխան սոցիալ-տնտեսական հիմնարար տեղեկատվություն Նախատեսվող ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների վերաբերյալ:
2. Վերոնշյալ տեղեկատվության օգտագործման եւ խորհրդակցությունների միջոցով պարզել տնտեսական զարգացման հնարավորությունները եւ հնարավոր խոչընդոտները:
3. Այս հետազոտությունների եւ քննարկումների արդյունքում համայնքների ուժեղ եւ թույլ կողմերի վերլուծություն՝ ապահովելով երկարատեւ կայունություն ԲՀՊՏ կառավարման համակարգում:
4. Կազմակերպել եւ վարել որակական հարցազրույցներ եւ/կամ խմբային քննարկումներ այն շահագրգիռ կողմերի հետ, որոնք առկա են գործող «Չանգեզուր» եւ Նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» արգելավայրերի տարածքում. հաստատություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ եւ համայնքներ:
5. Ըստ անհրաժեշտության՝ կազմակերպել պրեզենտացիա եւ/կամ սեմինար, որը կամփոփի հետազոտության հիմնական արդյունքները:

Ակնկալվում է, որ հետազոտության հետեւյալ հիմնական արդյունքները կներկայացվեն ԲՀՀ-Հայաստանին.

- Հետազոտության մեջ ներգրավված պոտենցիալ շահառուների ցանկը,
- Կիրառված հետազոտության գործիքները,
- Սոցիալ-տնտեսական իրավիճակի տվյալների ամփոփ բազաները,
- Հետազոտության ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ վերլուծական հաշվետվությունը:

Ներկայացված արդյունքները պետք է (կարող են) օգտագործվեն Նախատեսվող արգելավայրերի կառավարման պլանների կազմման ընթացքում:

1.2.2 Մեթոդաբանություն

Ներկայացված սոցիալ-տնտեսական հետազոտությունն իրականացվել է ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնիի կողմից ներկայացված Տեխնիկական Առաջարկում բերված մեթոդաբանության հիման վրա: Առաջադրանքի իրականացումը բաժանվել է 3 պայմանական փուլերի՝ *սոցիալ-տնտեսական տեղեկատվության հավաքագրման, տվյալների համակարգման եւ դասակարգման եւ վերլուծության ու հաշվետվության պատրաստման:*

1.2.2.1 Տեղեկատվության հավաքագրում

Տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է տեղերում (համայնքներում, մարզպետարաններում, պետական կառույցներում եւ այլն) դեմառդեմ հարցազրույցների երկրորդային տեղեկատվության եւ փաստաթղթերի ուսումնասիրության, համայնքների ներկայացուցիչների հետ անմիջական շփումների միջոցով: Տեղեկություններ են ստացվել տարբեր պետական կառույցների մարզային ներկայացուցչություններից, ինչպիսիք են վիճակագրական գործակալությունները, պետական կադաստրի մասնաճյուղերը, ՀԿ-ները, մասնավոր ձեռնարկությունները եւ այլն: Մասնավորապես՝ տվյալների հավաքագրման փուլում օգտագործվել են հետևյալ ելակետային փաստաթղթերը.

- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 9-Ս,
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 4-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 29-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 49-ԳՏՀ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 22 հողհատկացում,
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 24-ԳՏ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 6-ԳՏՀ (տարեկան),
- ՀՀ ԱՎԾ Պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձեւ 6-մեք (տարին 3 անգամ),
- ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի հաշվետվություն, Ձեւ 22,
- ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի հաշվետվություն, Ձեւ 22ա,
- Համայնքապետարանների կողմից տրամադրված ներքին օգտագործման այլ լրացուցիչ փաստաթղթեր:

Հավաքագրված տեղեկությունները ստուգվել, համադրվել եւ ճշգրտվել են: Կարելի է նշել, որ ներկայացված բոլոր կառույցները եւ համայնքների ներկայացուցիչները պատրաստակամ են եղել համագործակցելու, ներկայացնելու իրենց կարծիքը եւ օժանդակելու իրականացվող աշխատանքին:

Տեղեկատվության հավաքագրման նպատակով օգտագործվել են ստանդարտ հետազոտական գործիքներ, իսկ ներկայացման համար՝ տվյալների բազաներ: Հարմոնիզացված բազաների կիրառությունը թույլ է տվել հորիզոնական վերլուծություն իրականացնել՝ կատարելով համեմատություններ եւ ընդհանրացումներ, ինչպես նաեւ հայտնաբերել հիմնական տարբերությունները: Հավաքագրվել են ինչպես քանակական, այնպես էլ՝ որակական տեղեկություններ:

1.2.2.2 Տեղեկատվության համակարգում եւ վերլուծություն

Հավաքագրված ողջ տեղեկատվությունը համակարգվել է ըստ մարզերի եւ համայնքների: Նման մոտեցումը թույլ է տվել իրականացնել ինչպես ընդհանրացված, այնպես էլ՝ ագրեգացված վերլուծություն: Հնարավոր է դարձել նույնիսկ համեմատականներ անցկացնել երկու մարզերի տարբեր համայնքների միջեւ: Տվյալները դասակարգվել եւ ներկայացվել են հիմնականում աղյուսակների տեսքով, ինչպես եւ բերվել են սույն հաշվետվության մեջ: Միաժամանակ, յուրաքանչյուր համայնքի մասով պատրաստվել է առանձին տվյալների բազա: Ներկայացված հաշվետվության բաժինները մեծամասամբ համընկնում են տվյալների բազայի հիմնական գլուխների հետ, որոնք են.

- Համայնքների ընդհանուր նկարագիրը,
- Ժողովրդագրական իրավիճակը,

- Սոցիալական, մշակութային, հեռահաղորդակցության, կոմունալ, տրանսպորտային եւ այլ ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունը եւ վիճակը,
- Մարդկային եւ աշխատանքային առկա ռեսուրսները, զբաղվածությունը եւ եկամուտների աղբյուրները,
- Համայնքի տարածքի բաշխվածքը, գյուղատնտեսական հողատեսքերը, անասնազխաքանակը եւ գյուղատնտեսական արտադրանքի ծավալները,
- Գյուղատնտեսական ծառայությունների եւ ենթակառուցվածքների առկայությունը եւ վիճակը,
- Մասնավոր ձեռնարկատիրության առկայությունը եւ վիճակը,
- Համայնքների հիմանական ուժեղ եւ թույլ կողմերը, խնդիրները եւ հնարավորությունները,
- Այլ տեղեկություններ:

Տվյալների բազայի ընդհանուր կառուցվածքը մշակվել է խորհրդատվական թիմի կողմից նախապես, ներկայացվել է ԲՀՀ-Հայաստանի Ծրագրի Ղեկավարին եւ հաստատվել նրա կողմից:

2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ԽՈՒՍՏՈՒՓԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2.1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1.1 Վարչակազմը

Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերին հարակից տարածքների սոցիալ-տնտեսական հիմնարար հետազոտությունն իրականացվել է 8 համայնքներում՝ Վարդանիձոր, Ծավ, Սրաշեն, Շիկահող, Ներքին Հանդ, Լեռնաձոր, Գեղանուշ եւ Ճակատեն: Իրականում որոշ համայնքներ բաղկացած են մի քանի համեմատաբար փոքր գյուղերից: Այսպես՝ Վարդանիձոր համայնքը ներառում է Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր, Վանք եւ Կալեր գյուղերը, Ծավը՝ Ծավ եւ Շիշկերտ գյուղերը, Լեռնաձորը՝ Լեռնաձոր, Ձագեձոր, Թավշուտ, Կաթնառատ, Փխրուտ, Անդրկավան, Բաքիկավան, Վերին Գիրաթաղ եւ Ներքին Գիրաթաղ գյուղերը, իսկ Գեղանուշը՝ Գեղանուշ եւ Գոմավան գյուղերը: Այսինքն՝ հետազոտությունն իրականում վերաբերել է 22 գյուղական բնակավայրերի:

Խորհրդատվական թիմն այցելել է բոլոր համայնքները եւ առանձին-առանձին աշխատել բոլոր համայնքապետերի եւ համայնքային աշխատանքային խմբերի հետ: Նրանք հանդիսացել են համայնքների վերաբերյալ տեղեկությունների առաջնային եւ հիմնական աղբյուրը: Ստորեւ ներկայացված են ընդհանուր տեղեկություններ հետազոտված համայնքների վերաբերյալ:

Աղյուսակ 1 - Ընդհանուր տեղեկություններ համայնքների եւ դրանց վարչակազմի վերաբերյալ¹

Բնութագրիչներ	Վարդանի-ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Ջեռավորությունը մարզկենտրոնից, կմ	64	36	30	22	37	24	5	9
Ջեռավորությունը Երեւանից, կմ	364	356	350	342	342	328	325	319
Բարձրությունը ծովի մակարդակից, մ	1,110	1,800 (1,100)	1,050	980	800	1670	900	900
Համայնքապետը՝	Ալբերտ Բեգլարյան	Արարատ Մարտիրոսյան	Գրեկյա Աղաբեկյան	Գեղամ Ղազարյան	Խաչիկ Բաղդասարյան	Ստեփան Պետրոսյան	Կամո Ավանեսյան	Ալբերտ Հարությունյան
Սկսած	2003	2008	2002	2002	1997	1985	2004	2010
Կրթությունը	Բարձրագ.	Միջնակարգ	Բարձրագ.	Բարձրագ.	Միջնակարգ	Բարձրագ.	Միջն. մասն.	Բարձրագ.
Տվյալները	+374 94 062006	+374 77 003373	+374 93 156990	+374 93 118361	+374 77 864280	+374 94 820923	+374 285 20029	+374 94 300310
Համայնքապետարաններ ի աշխատակիցների թիվը	8	8	6	6	5	16	9	9

Գրեթե բոլոր բնութագրիչներով հետազոտված համայնքներն իրարից տարբերվում են: Գեղանուշից եւ Ճակատենից բացի, համայնքները հեռու են տեղակայված մարզկենտրոնից եւ արդյունաբերական Բաջարան քաղաքից, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական արտադրանքի հիմնական շուկան Սյունիքի մարզում: Համայնքների հեռավորությունը մայրաքաղաք Երեւանից գերազանցում է 300 կմ-ը, ինչը մեծապես նվազեցնում է տեղական գյուղատնտեսական արտադրանքի գնային մրցունակությունը՝ թերեւս բացառությամբ նույն եւ արքայանարինջի: Համայնքները մեծապես

¹ Աղբյուրը՝ ԱՄ Փարթնըրզ Զոնալթինգ Զամփնի հետազոտական թիմ

տարբերվում են նաեւ ծովի մակերեսից ունեցած բարձրությամբ, ինչը շատ կարելու է գյուղատնտեսական արտադրության տեսանկյունից: Ծովի մակերեսից մոտ 1000 մետր բարձրությունը շատ հարմար է հատկապես բարձրաժեք գյուղատնտեսական արտադրանքի (օրինակ մրգերի) մշակության համար, բայց 1500 եւ ավել բարձրության վրա գտնվող արոտավայրերի առկայությունը եւս նպաստավոր է գյուղատնտեսության վարման, մասնավորապես անասնապահության համար:

Գրեթե բոլոր համայնքապետերն էլ իրենց պաշտոնները զբաղեցնում են արդեն բավականին երկար ժամանակ, ինչը նշանակում է, որ նրանք լավ տեղեկացված են իրենց համայնքների խնդիրներից եւ կարիքներից: Համայնքների ներկայացուցիչները հետազոտական թիմին ընդունել են մեծ պատրաստակամությամբ եւ նշել, որ իրենք պատրաստ են աջակցել իրենց համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ցանկացած ծրագրի իրականացմանը:

Ընդհանուր առմամբ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հետազոտված համայնքներում ապահովվում են 67 աշխատատեղեր, որոնցից բուն համայնքապետարաններում՝ դրանց կեսից պակասը: Մյուս աշխատատեղերն ապահովվում են համայնքների ակումբներում, մշակույթի տներում, գրադարաններում, մանկապարտեզներում եւ այլն: Մասնագիտական գրեթե ողջ անձնակազմն ունի առնվազն մասնագիտական, իսկ հիմնականում՝ բարձրագույն կրթություն:

Սույն բաժնում կարելու է հետեւությունն այն է, որ հետազոտված 8 համայնքներից առնվազն 6-ում համայնքների ղեկավարները պաշտոնավարում են արդեն բավականին երկար եւ լավ տեղյակ են իրենց համայնքների խնդիրներին: Նրանք իրենց լուրջ ներդրումը կարող են եւ պարտավոր են բերել գործող արգելավայրի ընդլայնման եւ ապագա ԲՀՊՏ հիմնման գործում:

2.1.2 Ֆինանսավորում

Համայնքների տեղական ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համայնքների բյուջեներն են: Ի սկզբանե պետք է նշել, որ դրանք մեծ չեն, եւ չեն կարող բավարար լինել առկա խնդիրների նույնիսկ փոքր մասի լուծման համար, որոնց թվում կարելի է նշել համայնքներում ապրելու վատ կենսապայմանները, հնացած ենթակառուցվածքները, եւ այլն: Այս խնդիրները որոշակիորեն արժարժված են նաեւ հետազոտված համայնքների 4-ամյա սոցիալ տնտեսական զարգացման ծրագրերում եւ Սյունիքի մարզի ռազմավարական զարգացման ծրագրում²:

Համայնքային բյուջեների եկամտային մասը բաղկացած է երկու հիմնական բաժիններից՝ *վարչական եւ ֆոնդային բյուջեներից*: Վարչական բյուջեն սովորաբար հատկացվում է ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով, այն է՝ աշխատավարձերի վճարման եւ պահպանման ոչ մեծ աշխատանքների իրականացման նպատակով: Ֆոնդային բյուջեն սովորաբար օգտագործվում է կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով: Հետազոտված համայնքների ագրեգացված բյուջետային ցուցանիշները ներկայացված են ստորեւ.

² Նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել առաջին պահանջով

Աղյուսակ 2 - 2010թ. պլանավորված եւ փաստացի բյուջեները հետազոտված համայնքներում, ՀՀ դրամ³

Պլանավորված բյուջե	Վարդանի-ծոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Յանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Վարչական բյուջե	6,293,000	19,711,000	5,275,000	9,777,000	4,856,000	14,056,000	8,140,000	6,073,000
<i>Որից՝ պետ. դրամաշնորհներ</i>	<i>3,500,000</i>	<i>4,406,000</i>	<i>3,500,000</i>	<i>3,500,000</i>	<i>3,500,000</i>	<i>3,781,000</i>	<i>3,500,000</i>	<i>3,500,000</i>
Ֆոնդային բյուջե	0	0	0	0	0	0	533,000	0
Փաստացի բյուջե	Վարդանի-ծոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Յանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Վարչական բյուջե	99%	52%	100%	88%	89%	105%	118%	96%
Ֆոնդային բյուջե							100%	

Հետազոտված համայնքներում բյուջեների պլանավորված մեծությունը տատանվում է 5-20 մլն դրամի սահմաններում: Ֆինանսական միջոցների փաստացի ներհոսքն ապահովվում է արտաքին (հիմնականում Պետական Բյուջեից) եւ ներքին (համայնքում հարկերի եւ վճարների հավաքագրումից) մուտքերի հաշվին: Պետական բյուջեի պարագայում հատկացումների մակարդակը գրեթե բոլոր դեպքերում կազմել է պլանավորված գումարի 100%-ը: Պլանավորված եւ փաստացի բյուջեների տարբերությունը հիմնականում պայմանավորվում է տեղական հարկերի եւ վարձավճարների ցածր հավաքագրելիությամբ: Ծավ, Շիկահող եւ Ներքին Յանդ համայնքներում բյուջետային գումարների հավաքագրելիությունը գտնվում է ցածր մակարդակի վրա, մինչդեռ Լեռնաձոր եւ Գեղանուշ համայնքները եկամտի լրացուցիչ աղբյուրներ են ունեցել եւ գերակատարել են իրենց բյուջեները:

Տեղական հարկերի եւ հավասարեցված վճարների փաստացի հավաքագրելիության մակարդակը հետազոտված համայնքներում 2010թ. տատանվել է 87%-144% սահմաններում՝ Լեռնաձոր համայնքի բացարձակ առաջատարության պայմաններում: Հետաքրքիր է նշել, որ ակտիվային հարկերի հավաքագրելիության մակարդակը մոտ է առավելագույնին եւ բացարձակ մեծությամբ դրանք բավականին մեծ գումարներ են կազմում: Սա վկայում է, որ շրջանառության մեջ գտնվող ակտիվների մեծ քանակության մասին: Այս առումով խնդիրներ ունեն միայն Շիկահող եւ Ներքին Յանդ համայնքները. հողի վարձակալության վճարների հավաքագրելիության տոկոսը կազմում է 31%-101%, որտեղ վատագույն դիքերը զբաղեցնում են Ծավ եւ Ներքին Յանդ համայնքները:

Համայնքային բյուջեների մուտքերի զգալի մասը հատկացվում է Պետական Բյուջեից՝ պաշտոնական համահարթեցման դրամաշնորհների տրամադրման միջոցով: Այս դրամաշնորհների գումարը տատանվում է 3,500,000 ՀՀ դրամի սահմաններում մեկ համայնքի հաշվով, բացառությամբ Ծավի, որտեղ այդ գումարը 2010թ. կազմել է 4,400,000 դրամ: Համահարթեցման դրամաշնորհներ մասնաբաժինը համայնքների վարչական բյուջեներում 2010թ. տատանվել է 27%-72% սահմաններում:

Համայնքային վարչական բյուջեների մի զգալի մասն էլ ապահովվում է համայնքապետարանների կողմից հիմնականում կենտրոնական իշխանությունների անունից ծառայությունների մատուցման դիմաց: Հաշվետվության մեջ դեռեւս անդրադարձ կարվի այն հանգամանքին, որ հետազոտված համայնքները լուրջ խնդիրներ ունեն հատկապես ենթակառուցվածքների վատ վիճակի պատճառով: Համայնքային ենթակառուցվածքների մեծ մասը՝ շենքերը, ճանապարհները, խմելու եւ ոռոգման ջրի ցանցերը, էլեկտրականության մատակարարման համակարգը եւ այլն հնացած են, եւ անհապաղ վերանորոգման կարիք ունեն: Այս պահանջներն իրենց մեծությամբ գերազանցում են համայնքային

³ Աղբյուրը՝ համայնքապետարաններ

բյուջեները բազմաթիվ անգամ եւ մոտ ապագայում իրավիճակի փոփոխության որեւէ նախադրյալ դեռեւս չի նկատվում:

Յետեւությունն այն է, որ ԲՀՊՏ ստեղծման եւ մասնավորապես Էկոտուրիզմի զարգացման առումներով անհրաժեշտ է սերտ համագործակցություն ծավալել պետական կառույցների եւ զարգացման ֆինանսավորում իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ միտված համայնքների ընդհանուր եւ ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի իրականացմանը: Սեփական ռեսուրսներով համայնքներն այս աշխատանքներն իրականացնել չեն կարող:

Յետազոտված համայնքների բյուջեները մանրամասնորեն համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազաներում, որոնք հասանելի են սույն հաշվետվության հավելվածներում:

2.1.3 Յողեղ

Յետազոտված համայնքների ընդհանուր մակերեսը կազմում է 26,400 հա, որտեղ Լեռնաձոր համայնքն ունի ամենամեծ մասնաբաժինը (ինչը նորմալ է, քանի որ համայնքը բաղկացած է 9 գյուղերից): Համայնքների տարածքները պաշտոնապես բաժանվում են 9 տեսակների, որոնք ներկայացված են Աղյուսակ 3-ում: Սոցիալ-տնտեսական վերլուծության տեսանկյունից առավել կարեւորվում են գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ի տարբերություն Յայաստանի այլ գյուղական վայրերի՝ *վարելահողերը* հետազոտված համայնքներում համեմատաբար փոքր են. բոլոր համայնքները միասին ունեն 1,000 հա պակաս մակերես: Սա պայմանավորված է այդ համայնքների բնական լանդշաֆտով. տարածքները լեռնային են, անտառածածկ, վարելահողերը՝ կտրտված եւ դժվար մատչելի: Բացի այդ, համայնքների բնակչությունը շատ աղքատ է եւ սովորաբար վարելահողերի ինտենսիվ մշակության համար բավարար միջոցներ չի տնօրինում: Բացասական պատկերն ամբողջանում է որոշ համայնքներում ոռոգման բացակայությամբ: Արդյունքում վարելահողերը դեգրադացվում են եւ ծածկվում անտառներով՝ էլ ավելի խորացնելով գյուղատնտեսության ծանր վիճակը հետազոտված համայնքներում: Մյուս կողմից՝ համայնքներն իսկապես պարտավոր են մշակել այդ հողերը, քանի որ գյուղատնտեսությունը փաստորեն հանդիսանում է բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը:

Բազմամյա տնկարկների ծավալները փոքր են՝ մոտ 22 հա 9 համայնքներում: Դրանց մեծ մասը պտղատու այգիներ են (առկա են նաեւ ոչ մեծ խաղողի այգիներ) միայն մեկ համայնքում: Սա բացասական բացահայտում է հանդիսանում, քանի որ այգեգործությունը բարձրարժեք մշակության եղանակ է եւ կարող է եկամուտների զգալի մակարդակ ապահովել տեղական ՏՏ-ների համար: Միեւնույն ժամանակ՝ ներկայացված ցուցանիշները ենթակա են որոշակի քննադատության, թեեւ դրանք ներկայացվել են պաշտոնական աղբյուրներից (Պետական կադաստրի մարզային մասնաճյուղից): Փաստացի այցելությունների եւ տեղական բնակչության հետ շփումների արդյունքում պարզվել է, որ իրականում այգիների մակերեսն ավելի մեծ է: Բազմաթիվ ֆերմերներ (օրինակ՝ Ներքին Յանդում) հիմնել են պտղատու այգիներ (արքայանարինջի, նռան եւ այլն), որոնք հիմնականում նոր են, սակայն շատ շուտով կդառնան բերքատու:

Աղյուսակ 3 - Համայնքային հողերի բաշխվածքն ըստ օգտագործման նպատակների, հա (2011թ. սկզբի դրությամբ) ⁴

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսքերն ըստ նշանակություն	Վարդանի-ծոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Գանդ	Լեռնածոր	Գեղանուշ	Ճակատեն	
1.1	1. Գյուղատնտեսական հողեր	Վարելահող	124.69	113.64	171.78	153.27	121.23	66.31	133.34	107.04	
1.2		Բազմ. տնկարկներ	4.07			11.74				6.21	
1.2.1		ա.թ.պտղատու այգի	3.31			11.74				6.21	
1.2.2		ա.թ.խաղողի այգի	0.76								
1.3		Խոտհարք	12.21	222.08	15.98	3.21	8.59	293.66	12.32	80.58	
1.4		Արոտ	445.48	3089.58	187.25	207.92	77.63	2828.39	657.63	129.54	
1.5		Այլ հողատեսքեր	1165.28	359.60	28.93	298.00	33.52	4164.04	81.76	103.26	
1		ԸՆդամենը	1751.73	3784.90	403.94	674.15	240.97	7349.40	885.05	426.63	
2.1	2. Բնակավայրերի հողեր	Բնակելի կառուցապ.	20.97	29.56	15.09	38.45	15.87	96.24	44.80	25.53	
2.1.1		ա.թ.տնամերձ հողեր	20.97	29.56	15.09	38.45	15.87	96.23	44.80	25.53	
2.2		Հաս. կառուցապատ.	2.11	1.64	0.25	1.50	1.06	4.86	1.18	0.60	
2.3		Խառը կառուցապատ.						3.83			
2.4		Ընդհ. օգտագործման	4.97	6.57	2.43	5.33	4.28	24.51	8.48	5.25	
2.5		Այլ հողեր	9.33	24.39	9.70	21.35	11.44	78.71	33.86	9.36	
2			ԸՆդամենը	37.38	62.16	27.47	66.63	32.65	208.15	88.32	40.74
3.1	3. Արդյունաբեր., ընդերքօգտ. եւ այլ արտադ. նշ. օբյեկտների հողեր	Արդյունաբերության	1.37			0.37		6.79	21.00		
3.2		Գյուղտնտ., արտադր.	3.16	4.29	1.11	0.89	0.90	22.76	3.55	1.28	
3.3		Պահեստարանների	0.06	0.05				0.07			
3.4		Ընդերք օգտագործ.	15.85					15.17			
3			ԸՆդամենը	20.44	4.34	1.11	1.26	0.90	44.79	24.55	1.28
4.1	4. Էներգետ., տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուց. օբյեկտների հողեր	Էներգետիկայի	3.31	1.31		0.06	0.02	25.46		0.1	
4.2		Կապի			0.01		0.08				
4.3		Տրանսպորտի	5.51	2.55	4.27	3.60	4.99	11.17	5.31	2.94	
4.4		Կոմուն. ենթակառուց.		0.06	0.04	0.03	0.59	3.55			
4			ԸՆդամենը	8.82	3.92	4.32	3.69	5.68	40.18	5.31	2.95
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	Բնապահպանական		227.54			127.99				
5.1.1		ա.թ. արգելոցներ		227.54			63.79				
5.1.2		արգելավայրեր					64.20				
5.4		Պատմ., մշակութ.	0.48	10.22	6.82	19.26	8.98	35.52	13.78	5.79	
5			ԸՆդամենը	0.48	237.76	6.82	19.26	136.97	35.52	13.78	5.79
6	6. Հատուկ նշանակության հողեր										
7.1	7. Անտառային հողեր	Անտառ	210.46	1847.42	140.56	729.84	361.35	1976.54	971.39	535.85	
7.2		Թփուտ	236.84	170.06	264.60	103.37	8.33	1535.32	218.85	164.21	
7.3		Վարելահող									
7.4		Խոտհարք									
7.5		Արոտ									
7.6		Այլ հողեր									
7			ԸՆդամենը	447.30	2017.48	405.16	833.21	369.68	3511.86	1190.24	700.06
8.1	8. Ջրային տարածքներ	Գետեր	5.36	14.29	1.36	2.65	7.22	142.18	14.29	22.81	
8.2		Ջրամբարներ								0.01	
8.3		Լճեր									
8.4		Ջրանցքներ	1.95					2.46	1.89		
8.5		Հիդրոտեխ. եւ ջրտնտ. այլ օբ.	0.03	0.01			0.36	0.47		0.07	
8		ԸՆդամենը	7.34	14.30	1.36	2.65	7.58	145.11	16.18	22.89	
9.1	9	Աղուտներ									
9.3		Ավազուտներ									
9		ԸՆդամենը									
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ			1+2+3+4+5+6+7+8+9	2273.49	6124.86	850.18	1600.85	794.43	11335.01	2223.43	1,200.34

Վարելահողերի եւ բազմամյա տարածքների մակերեսների փոքրությունը մեծապես փոխհատուցվում է արոտավայրերի եւ խոտհարքների առատությամբ: Որոշ համայնքներ, օրինակ՝ Ծավը եւ Լեռնածորը, ունեն նման ընդարձակ մակերեսներ, որոնք սակայն թերօգտագործվում են: Դրանք

⁴ Աղբյուր՝ Պետական կադաստրի կապանի մասնաճյուղ

Ներկայումս համայնքների ՏՏ-ների կողմից օգտագործվում են տնային կենդանիների արածեցման եւ կերարտադրության (հավաքման) նպատակներով: Այս հողերի փոքր մասն է միայն սեփականաշնորհված կամ վարձակալված՝ չնայած որոշ տարածքներ բնակչության կողմից շահագործվում են բավականին ինտենսիվորեն: Այս երեւույթը կարելի է նաեւ ԲՀՊՏ-ների հիմնման տեսանկյունից. լայնածավալ անասնապահությունը, արոտավայրերի եւ խոտհարքների օգտագործումը կարող են վտանգել որոշ տարածքների բնապահպանական հավասարակշռությունը: Ներկայումս նմանատիպ տարածքների կայուն օգտագործման եւ արդյունավետ կառավարման մեխանիզմներ չկան: Որոշ նախնական քայլեր են իրականացվում արոտավայրերի կառավարման պլանների մշակման եւ կիրառության ուղղությամբ, սակայն հետազոտված համայնքներում դրանք դեռեւս կիրառական չեն:

Բնակավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 560 հա եւ Լեռնաձոր համայնքը կրկին առաջինն է: Այս նպատակով հատկացված հողատարածքներում ընդգրկված են նաեւ ՏՏ-ների տները եւ տնամերձ հողատարածքները, որոնք կազմում են ընդհանուր մակերեսի մոտ կեսը: Տնամերձերը մշակվում են հիմնականում սեփական կարիքների բավարարման նպատակով: Բնակավայրերի տարածքի մոտ 14%- ն օգտագործվում է հասարակական կառուցապատման եւ ընդհանուր օգտագործման կառույցների շահագործման նպատակներով: Դրանց մեջ մտնում են համայնքապետարանների, ակումբների եւ մշակույթի տների, կրթական հաստատությունների շենքերը եւ այլն:

Հատուկ ուշադրության են արժանի *արդյունաբերական եւ հատկապես ընդերքօգտագործման* նպատակներով հատկացված տարածքները, քանի որ դրանց առկայությունը սովորաբար մեծապես վտանգում է բնապահպանական վիճակը՝ չնայած զգալիորեն նպաստում է տնտեսական կայունությանը եւ եկամուտների գեներացմանը: Նմանատիպ մեծ տարածքներ առկա են Լեռնաձոր եւ Գեղանուշ համայնքներում, սակայն պետական կադաստրի տվյալներով որոշ մակերեսներ կան նաեւ Վարդանիձորում եւ Ծավում: Այս պարագայում եւ ավելի մանրամասն դիտարկում պետք է կատարվի: Ներկայացված տվյալներում կրկին որոշակի անհամապատասխանություն կա: Օրինակ Ծավում կա առնվազն մեկ քարհանք, որն արտացոլված չէ հաշվետվություններում: Միակ բացատրությունը կարող է լինել այն, որ նման միավորները օրինական գործունեություն չեն իրականացնում եւ պաշտոնական կառույցները «տեղյակ» չեն դրանց մասին: Բացի այդ, հետազոտված գրեթե բոլոր համայնքներում կան տարածքներ, որոնք հատկացվել են լեռնահանքային հետազոտություններ իրականացնելու համար: Առնվազն մեկ ընկերություն ունի պետական լիցենզիա հետազոտվող տարածքում մի քանի հարյուր հա ընդհանուր տարածքի վրա հետախուզություն իրականացնելու համար: Մոտ ապագայում այս ընկերությունը կարող է պաշտոնապես դիմել ՀՀ Կառավարությանը տարածքների լայնածավալ հանքային շահագործման թույլտվություն ստանալու հայտով: Ինչեւիցե, ներկայումս հետազոտված 8 համայնքներից առնվազն 6-ում ինտենսիվ լեռնահանքային գործողություններ չեն իրականացվում:

Հատուկ պահպանվող տարածքներ արձանագրվել են Ներքին Հանդ եւ Ծավ համայնքներում: Այս պարագայում եւս տվյալների լրացուցիչ ստուգման կարիք է զգացվում: Չեկուցվել է ընդամենը 356 հա տարածքի մասին, սակայն այլ աղբյուրներից ստացվել են տեղեկություններ, որ պահպանվող տարածքները շատ ավելի մեծ մակերես ունեն: Հիշատակված տարածքները ներառում են «Շիկահող» Պետական Արգելոցի եւ «Սոսիների Պուրակ» արգելավայրի տարածքները: Վերջին տասնամյակի ընթացքում Շիկահողի Պետական Արգելոցի ղեկավարության եւ անձնակազմի կողմից հսկայական ջանքեր են ներդրվել այս տարածքում բնապահպանական իրավիճակի բարելավման ուղղությամբ եւ այդ ջանքերը տվել են զգալի արդյունքներ: Բոլոր համայնքներում հիշատակել են բնական եւ/կամ պատմամշակութային հուշարձանների առկայության մասին, որոնք պահանջում են հատուկ պահպանության եւ պաշտպանության պայմաններ: Հատուկ պահպանվող տարածքների,

ինչպես նաեւ նշված հուշարձանների առկայությունը կարող է մեծապես նպաստել եւ կարելուր նախապայման դառնալ թիրախված տարածքներում բնապահպանական վիճակի բարելավման եւ հարակից համայնքների կայուն սոցիալ-տնտեսական (հատկապես տուրիզմի) զարգացման համար:

Բոլոր համայնքների վարչական սահմաններում կան *անտառածածկ* տարածքներ: Ընդհանուր առմամբ համայնքները տվյալներ են ներկայացրել շուրջ 6,800 հա անտառների եւ 2,700 հա թփուտների մասին:

Բոլոր համայնքներից տեղեկություններ են ստացվել դրանց տարածքով հոսող *գետերի* մասին: Առաջատարը կրկին Լեռնաձոր համայնքն է. այստեղ են կենտրոնացած հետազոտված բոլոր համայնքների գետային տարածքների ավելի քան 65%-ը: 5 համայնքներում կառուցվել եւ շահագործվում են հիդրոտեխնիկական կառույցներ, որոնք սակայն մեծ մակերեսներ չեն զբաղեցնում: Այս կառույցների ազդեցությունը համայնքների բնապահպանական վիճակի վրա երկակի է. մի կողմից դրանք այլընտրանքային վերականգնվող էներգիայի աղբյուր են հանդիսանում (ինչը շատ պահանջված է Հայաստանում), մյուս կողմից՝ այս կառույցները սովորաբար չեն բավարարում բոլոր բնապահպանական ստանդարտներին: Չնայած նմանատիպ կառույցների հիմնումը ենթարկվում է բնապահպանական փորձաքննության՝ դրանց ինտենսիվ շահագործումը զգալի բացասական ազդեցություն է ունենում ջրային ավազանի վրա՝ հատկապես ձկնատեսակների եւ դրանց քանակի:

ԲՀՊՏ հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից վերը ներկայացված վերլուծությունից կարելի է առանձնացնել հողերի գյուղատնտեսական օգտագործման հանգամանքը: ԲՀՊՏ-ները ըստ սահմանման պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ եւ համայնքներում պետք է ապահովվեն եկամուտների գեներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները եւ եղանակները համայնքներում շատ արդյունավետ չեն: ԲՀՊՏ հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման համակարգերի վերականգնման եւ այլ առումներով:

2.1.4 Սոցիալական եւ ժողովրդագրական տվյալներ

2.1.4.1 Բնակչության սեռատարիքային բաշխվածքը

Յետազոտված համայնքների ժողովրդագրական տվյալները հավաքագրվել են համայնքապետարաններից եւ ճշգրտվել են տարածքային վիճակագրական ծառայության միջոցով: Ստացված տեղեկությունների մեջ որոշ անճշտություններ են հայտնաբերվել, որոնք հարթվել են հետագա քննարկումների ընթացքում: Համայնքների համակարգված վիճակագրական տվյալները ներկայացված են Աղյուսակ 4-ում: Ժողովրդագրական իրավիճակի ուսումնասիրությունը մեծապես կարելուրվում է, քանի որ այն կարող է պայմանավորել համայնքներում սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծավալը եւ բնույթը:

Յետազոտված համայնքներում առկա բնակչության ընդհանուր թիվը 2011թ. սկզբի դրությամբ կազմել է 2801 մարդ: Սեռային բաշխվածքը մոտավորապես հավասարաչափ է. արական բնակչությունը միջին հաշվով կազմել է 47.5%: Իգական բնակչության թեթեւակի գերակշռությունը կարող է պայմանավորված լինել տղամարդկանց աշխատանքային միգրացիայի երեւոյթով: Իրավիճակը լավ չէ հատկապես Վարդանիձոր, Գեղանուշ եւ Ճակատեն համայնքներում, որտեղ արական եւ իգական բնակչության տարբերությունը հասնում է 8%-ի: Ներքին Հանդ եւ Սրաշեն

համայնքներում բնակչության թիվն ամենափոքրն է, ինչը կարող է որոշ խնդիրներ առաջացնել զարգացման ծրագրերի իրականացման տեսանկյունից: Նույնը վերաբերվում է նաեւ Լեռնաձոր համայնքին: Այստեղ բնակչությունը ամենամեծն է, սակայն այն բաշխված է 9 գյուղերի մեջ եւ կոնկրետ գյուղերի բնակչության թվաքանակն իսկապես փոքր է:

Չետաքրքիր է անդրադառնալ նաեւ ժամանակավոր առկա բնակչությանը, որոնց ընդհանուր թիվը կազմում է 443 մարդ, կամ ընդհանուր բնակչության 16%-ը: Այս փաստը կարող է բացատրվել մի քանի պատճառներով, որոնցից են փախստականների առկայությունը (որոնք չեն ցանկանում կորցնել իրենց կարգավիճակը եւ դրանից բխող առավելությունները), հանգստացողների առկայությունը, որոնք երկար ժամանակ են անցկացնում համայնքներում եւ այլն:

Համայնքների բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Չնայած դրան՝ բնակչության այս հատվածը չի կարելի մոռացության մատնել, քանի որ հենց նրանք են հանդիսանում համայնքներում առկա բնակչության թվաքանակի ավելացման առաջին աղբյուրը. այս մարդիկ ավելի շատ հակված կլինեն վերադառնալ իրենց համայնքներ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում: Բացակայողների ընդհանուր թիվը կազմում է 354 մարդ եւ նրանց մոտ 57%-ը տղամարդիկ են:

Սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ժողովրդագրական ցուցանիշներից առավել կարեւորվում է հետազոտված համայնքներում զբաղված բնակչության ցուցանիշը: Ստորեւ բերված աղյուսակում բերվում են համապատասխան տվյալներ՝ չնայած դրանք պաշտոնական բնույթ չեն կրում: Արձանագրվել է, որ *զբաղված բնակչության* մոտ 60%-ը ներգրավված է բացառապես գյուղատնտեսության մեջ: 40%-ը՝ իրականացնում է նաեւ ոչ գյուղատնտեսական գործունեություն՝ հիմնականում աշխատելով պետական կառույցներում՝ համայնքապետարաններում, կրթական եւ մշակութային հաստատություններում, մասնավոր ձեռնարկություններում եւ այլն:

Աղյուսակ 4 - Համայնքների բնակչության ժողովրդագրական բաշխվածքը (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁵

Համայնքներ	Բնակչություն	Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	Արական	Իգական	Ժամանակավոր բնակչություն, ա.թ.	Արական	Իգական	Զբաղված բնակչության առանց ժամանակավոր ներկաների, ա.թ.	Գյուղատնտեսության մեջ	Ոչ գյուղատնտեսության մեջ, ա.թ.	Կազմակերպություններում
Վարդանիձոր - 127 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	294	139	155							
	Մշտապես ներկա	276	126	150							
	Ժամանակավոր բացակա	18	13	5							
	Երկարատեւ բացակայող	27	13	14							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	360	166	194	84	40	44	190	140	50	50
Ծավ - 132 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	351	178	173							
	Մշտապես ներկա	332	169	163							
	Ժամանակավոր բացակա	19	9	10							
	Երկարատեւ բացակայող	35	14	21							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	445	218	227	113	49	64	248	169	79	79
Սրաշեն - 32 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	83	45	38							
	Մշտապես ներկա	82	44	38							
	Ժամանակավոր բացակա	1	1	-							
	Երկարատեւ բացակայող	3	2	1							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	108	58	50	26	14	12	43	27	16	16
Շիկահող - 60 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	133	68	65							
	Մշտապես ներկա	123	63	60							
	Ժամանակավոր բացակա	10	5	5							
	Երկարատեւ բացակայող	90	49	41							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	190	93	97	67	30	37	104	78	28	26
Ներքին Հանդ - 29 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	69	39	30							
	Մշտապես ներկա	54	30	24							
	Ժամանակավոր բացակա	15	9	6							
	Երկարատեւ բացակայող	29	16	13							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	72	40	32	18	10	8	42	27	15	15
Լեռնաձոր - 342 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	986	459	527							
	Մշտապես ներկա	979	452	527							
	Ժամանակավոր բացակա	7	7	-							

⁵ Աղբյուր՝ համայնքապետարաններ, ԱՎԾ Սյունիքի գործակալություն, ԱՄ Փարթնըրզ Զոնասալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

	Երկարատեւ բացակայող	68	46	22							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	1068	498	570	89	46	43	427	114	313	313
Գեղանուշ - 78 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	278	126	152							
	Մշտապես ներկա	278	126	152							
	Ժամանակավոր բացակա	-	-	-							
	Երկարատեւ բացակայող	22	12	10							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	380	176	204	102	50	52	176	158	18	18
Ճակատեն - 60 SS	Մշտական (ներառյալ ժամանակավոր բացակա)	135	65	70							
	Մշտապես ներկա	132	62	70							
	Ժամանակավոր բացակա	3	3	-							
	Երկարատեւ բացակայող	7	2	5							
	Առկա (ներառյալ ժամանակավոր ներկա)	178	82	96	46	20	26	90	75	15	15

Արձանագրվել է, որ բնակչության ընդհանուր առկա բնակչության 47.1%-ն է ներգրավված եկամուտ հետապնդող գործողություններում: Սա բարձր ցուցանիշ չի կարող համարվել, նույնիսկ եթե հաշվի առնենք ծերերի եւ երեխաների առկայությունը: Չնայած բացատրություններից մեկը Սյունիքի գյուղական համայնքներում նկատվող բնակչության ընդհանուր ծերացման միտումն է: Երիտասարդ ընտանիքների շրջանում վերջերս նկատվում է իրենց գյուղական համայնքները լքելու, Կապանում, Երեւանում կամ նույնիսկ արտերկրում հիմնավորվելու միտում՝ պայմանավորված ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Սա առաջնային կարեւորության խնդիր է հանդիսանում հետազոտված համայնքներում եւ անհրաժեշտ է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել այս միտումը կասեցնելու համար՝ նաեւ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելու միջոցով:

Չետազոտված համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածքը զարգացման ծրագրերի իրականացման տեսանկյունից հաջորդ կարեւոր գործոնն է հանդիսանում: Իրավիճակը բնութագրող ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 5-ում: 16-62 տարեկան առկա բնակչությունը սովորաբար դիտարկվում է որպես ցանկացած զարգացման ծրագրի իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային ռեսուրս: Չետազոտված համայնքներում բնակչության այս հատվածի մասնաբաժինը կազմում է 61.5% (մոտ 10%-ով պակաս, քան Գնիշիկի ԲՀՊՏ-ում): Անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ կան, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել բնակչության ծերացման ակնհայտ միտումները:

Չետաքրքրական է նաեւ, որ տարեց բնակչության մի մասը եւս զբաղված է: Տարեցների քիչ մասն է տնտեսապես ոչ ակտիվ: Այս մարդիկ սովորաբար զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ չնայած հիմնականում սեփական սպառմանը միտված ապրանքներ արտադրելով: Ընդհանրապես այս երեւույթը հատկանշական է գյուղական տարածքների բնակչության համար:

Աղյուսակ 5 - Համայնքների բնակչության սեռատարիքային բաշխվածքը (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁶

Համայնքներ	Տարիք	Բնակչության թվաքանակը, մարդ, ա.թ.	կրական	Իգական	Ժամանակավոր բնակչություն, ա.թ.	կրական	Իգական	Զբաղված բնակչություն (առանց ժամանակավորների), ա.թ.	Գյուղատնտեսութ. մեջ	Ոչ գյուղատնտ. գործողությ., ա.թ.	Կազմավերվածություններում
Վարդանիձոր	0-7	44	27	17	12	6	6				
	8-15	34	17	17	9	3	6				
	16-62	103	103		26	26		63	38	25	25
	63 եւ բարձր	19	19		5	5		12	12	0	0
	16-61	131		131	25		25	95	74	21	21
	62 եւ բարձր	29		29	7		7	20	16	4	4
Ծավ	0-7	38	21	17	26	14	12				
	8-15	47	16	31	12	4	8				
	16-62	153	153		24	24		121	72	49	49
	63 եւ բարձր	28	28		7	7		16	16	-	-
	16-61	131		131	39		39	87	57	30	30
	62 եւ բարձր	48		48	5		5	24	24	-	-
Սրաշեն	0-7	11	4	7	5	3	2				
	8-15	13	7	6	5	4	1				
	16-62	39	39		7	7		20	9	1	1
	63 եւ բարձր	8	8		-	-		3	3	-	-
	16-61	21		21	9		9	12	7	5	5
	62 եւ բարձր	16		16	-		-	8	8	-	-
Շիկահող	0-7	13	8	5	8	4	4				
	8-15	21	8	13	16	7	9				
	16-62	55	55		18	18		34	19	15	15
	63 եւ բարձր	22	22		1	1		18	17	1	1
	16-61	49		49	19		19	30	20	10	10
	62 եւ բարձր	30		30	5		5	22	22	-	-
Ներքին Հանդ	0-7	-	-	-	-	-	-				
	8-15	7	4	3	2	-	2				
	16-62	22	22		10	10		12	4	8	8
	63 եւ բարձր	14	14		-	-		11	11	-	-
	16-61	17		17	6		6	11	4	7	7
	62 եւ բարձր	12		12	-		-	8	8	-	-
Լեռնաձոր	0-7	80	48	32	10	8	2				
	8-15	110	58	52	10	3	7				
	16-62	316	316		28	28		210	16	194	194
	63 եւ բարձր	76	76		7	7		43	38	5	5
	16-61	361		361	29		29	120	15	105	105
	62 եւ բարձր	125		125	5		5	54	45	9	9
Գեղանուշ	0-7	31	16	15	14	7	7				

⁶ Աղբյուր՝ համայնքապետարաններ, ԱՎԾ Սյունիքի գործակալություն, ԱՄ Փարթևըրզ Բոնասալթինգ Բամփնիի հետազոտական թիմ

	8-15	46	19	27	10	3	7				
	16-62	107	107		28	28		58	54	4	4
	63 եւ բարձր	34	34		12	12		16	16	-	-
	16-61	118		118	33		33	68	54	14	14
	62 եւ բարձր	44		44	5		5	34	34	0	-
Ճակատեն	0-7	9	3	6	-	-	-				
	8-15	10	4	6	1	1	-				
	16-62	48	48		10	10		32	24	8	8
	63 եւ բարձր	27	27		9	9		12	12	-	-
	16-61	51		51	14		14	28	21	7	7
	62 եւ բարձր	33		33	12		12	18	18	-	-

2.1.4.2 Աշխատանքային միգրացիա

Վերը ներկայացված աղյուսակներում բացակայում են աշխատանքային միգրացիայի վերաբերյալ տվյալները: Այս երեւոյթը, ցավոք, հայկական իրականության անբաժանելի մասն է հանդիսանում արդեն մոտ երկու տասնամյակ, եւ հետազոտված համայնքներն այս առումով բացառություն չեն: Յուրաքանչյուր տարի բոլոր համայնքների որոշակի քանակությամբ բնակիչներ մեկնում են արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Շատ կարելի է այս հարցին անդրադառնալը, քանի որ այս միգրանտների գերակշիռ մեծամասնությունը երիտասարդ արական բնակչությունն է, որոնք շատ կարելի է դերակատարություն կարող են ունենալ հետազոտված համայնքների գյուղատնտեսական զարգացման գործում: Աշխատանքային միգրացիայի միտումները վերջին տարիներին քիչ թե շատ կայուն են եղել: Բաշխվածքը ներկայացված է ստորեւ:

Աղյուսակ 6 - Աշխատանքային միգրացիան համայնքներում, մարդ⁷

Համայնքներ՝ Տարի →	2008	2009	2010		Ընդամենը
			Քանակ	%	
Վարդանիճոր	2	2	2	0.55%	6
Ծավ	4	5	7	1.57%	16
Սրաշեն	6	6	6	5.55%	18
Շիկահող	4	3	3	1.58%	10
Ներքին Հանդ	4	14	14	19.44%	32
Լեռնաձոր	0	0	0	0%	0
Գեղանուշ	0	0	0	0%	0
Ճակատեն	0	0	0	0%	0
Ընդամենը	20	30	32	1.14%	82

Աշխատանքային միգրացիան զգալի չափեր ունի միայն Ներքին Հանդ համայնքում, ինչը կարող է պայմանավորված լինել համայնքի կտրվածությամբ եւ փոքր չափերով, եկամուտների ունենալու սահմանափակ հնարավորություններով, վատ ապրելակերպով եւ այլն: Որոշ համայնքներում աշխատանքային միգրացիայի ծավալները խիստ սահմանափակ են կամ չկա ընդհանրապես: Դա չի նշանակում, որ այն երբեք չի եղել այս համայնքներում: Պարզապես հեռացել են բոլոր նրանք ովքեր հակված էին հեռանալու, իսկ մնացողները գերադասում չաշխատել դրսում: Ընդհանուր առմամբ,

⁷ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ համայնքապետեր

հետազոտված համայնքներում աշխատանքային միգրացիայի քանակը շատ ավելի քիչ է, քան Հայաստանի այլ գյուղական տարածքներում:

2.1.4.3 Կրթություն

Համայնքներում մարդկային ռեսուրսների առկայությունը բնութագրող հաջորդ կարեւոր բնութագրիչը բնակչության կրթական մակարդակն է: Կրթական ընդհանուր բարձր մակարդակը նշանակում է համայնքներում որակյալ աշխատուժի առկայություն, ինչը մեծապես հեշտացնում է տարբեր նպատակներով անհրաժեշտ որակյալ մասնագետների ներգրավումը: Բացի այդ, պատրաստված բնակիչները սովորաբար ավելի շատ են անհանգստանում իրենց համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակով եւ ավելի պատրաստակամ են: Համայնքների բնակչության բաշխվածքն ըստ կրթական մակարդակի ներկայացվում է ստորեւ:

Աղյուսակ 7 - 18 տարեկանից բարձր բնակչության բաշխվածքն ըստ կրթական մակարդակի (մարդ), 2011թ. հունվարի 1-ի դրությամբ

Կրթական կարգավիճակ	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն	Ամբողջը
Դպրոց չհաճախած	0	0	0	0	0	0	4	0	4
Տարրական դպրոց	0	0	0	0	1	6	8	0	15
Անավարտ միջն.	35	0	0	0	17	10	20	61	143
Միջնակարգ	185	265	72	93	28	514	213	61	1431
Միջն. մասնագիտ.	40	50	4	40	11	200	35	30	410
Բարձրագույն	15	39	8	15	6	131	15	5	234
Ընդամենը	275	354	84	148	63	861	295	157	2237

Երեխաների կրթությունը կարեւորագույն խնդիր է հանդիսանում հայկական հասարակության մեջ: Բազմաթիվ ՏՏ-ներ կենսապայմանները բարելավելու կամ նոր գործունեություն սկսելու փոխարեն գերադասում են ներդրումներ կատարել երիտասարդ սերնդի կրթության մեջ: Սա ձեւավորվել է ավանդաբար՝ չնայած վերջին ժամանակահատվածում բարձրագույն կրթության թանկացումը մեծապես խոչընդոտում է այս միտմանը: Բնակչությունը տարրական եւ միջնակարգ կրթություն է ստանում հենց համայնքներում, մինչդեռ մասնագիտական եւ բարձրագույն կրթությունը նրանց համար հասանելի է միայն մարզկենտրոն Կապանում կամ մայրաքաղաք Երեւանում: Բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվով առաջատարները Լեռնաձոր եւ Ծավ համայնքներն են:

18 տարեկանից բարձր առկա բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների մասնաբաժինը կազմում է 10.5%, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներինը՝ 18.3%: Ցուցանիշները շատ բարձր չեն՝ գոնե այլ տարածքների հետ համեմատության մեջ, բայց միեւնույն է բավարար են կայուն զարգացման համար անհրաժեշտ մասնագետների ներգրավման տեսանկյունից:

2.1.4.4 Այլ ժողովրդագրական տեղեկություններ

Հետազոտված համայնքներում բնական աճի միտումները վերջին ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, դրական են: Դա հուսադրող է, քանի որ վկայում է համայնքների բնակչության

(հատկապես երիտասարդության) ապագայի նկատմամբ ունեցած պլանների մասին: Մանրամասները ներկայացվում են ստորեւ:

Աղյուսակ 8 - Ծնունդների եւ մահերի դիմամիկան հետազոտված համայնքներում, մարդ⁸

Համայնք Տարի →	2008		2009		2010		Ամբողջը	
	Ծնունդ	Մահ	Ծնունդ	Մահ	Ծնունդ	Մահ	Ծնունդ	Մահ
Վարդանիձոր	10	2	8	1	8	4	26	7
Ծավ	2	4	3	2	4	4	9	10
Սրաշեն	3	2	3	0	2	3	8	5
Շիկահող	0	4	1	3	0	5	1	12
Ներքին Հանդ	0	3	1	0	0	2	1	5
Լեռնաձոր	5	5	6	9	8	12	19	26
Քեղանուշ	3	5	4	11	3	3	10	19
Ճակատեն	6	0	12	0	13	0	31	0
Ընդամենը	29	25	38	26	38	33	105	84

Հետազոտված համայնքների բնակչությունը մոտեթիկ է: Այլազգի ընդամենը 4 բնակիչներ են հայտնաբերվել հետազոտության ընթացքում: Նույնը վերաբերվում է նաեւ հավատքին. Հայ-Առաքելական դավանանք չունի բնակչության ընդամենը 1%-ից քիչ մասը:

ԲՀՊՏ հիմնման տեսանկյունից ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը ծայրահեղ կարելուր նշանակություն ունի: Այս գործընթացն ակնկալում է կոնկրետ մարդկային ռեսուրսների առկայություն նշված տարածքներում: Կարելի է եզրակացնել, որ հետազոտված համայնքներում առկա մարդկային եւ աշխատանքային ռեսուրսները (բնակչության թվաքանակը, սեռատարիքային բաշխվածքը, կրթական մակարդակը եւ այլն) բավարար են ԲՀՊՏ հիմնման գործողությունների նախաձեռնման տեսանկյունից՝ չնայած որոշ դժվարություններ արդեն իսկ կարող են կանխատեսվել: Սյուս կողմից՝ ԲՀՊՏ հիմնման արդյունքում տեղական բնակչությունը հնարավորություն կստանա նոր որակներ եւ ունակություններ ձեռավորել, նոր տեսակի ծառայություններ ձեռավորել եւ մատուցել, որոնք ներկայումս դեռեւս սաղմնային վիճակի մեջ են գտնվում: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու նաեւ ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ներգրավված կազմակերպությունները: Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության եւ վստահության բարձրացման, կրթական եւ վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

2.2 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.2.1 Սոցիալական ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունը

Սոցիալական ենթակառուցվածքների՝ կրթական եւ առողջապահական հաստատությունների, սպորտային եւ արվեստի խմբակների եւ կառույցների, զվարճանքի վայրերի առկայությունը համայնքներում շատ կարելուր է համայնքային զարգացման տեսանկյունից: Ավելին, շատ հաճախ այս ենթակառուցվածքների բացակայությունը դառնում է բնակչության դժգոհության, ինքնադրսեւորման սահմանափակման, եւ նույնիսկ համայնքը լքելու հիմնական պատճառներից

⁸ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ Սյունիքի մարզային վիճակագրական գործակալություն

մեկը: Պահպանվող տարածքների հիմնման տեսանկյունից գործող ենթակառուցվածքների առկայությունը պարզապես անհրաժեշտություն է: Մեր օրերում, պահպանվող տարածքի հիմնումը նշանակում է ոչ միայն բնապահպանական բարձր մակարդակ, այլեւ հարակից բնակավայրերի կայուն եւ օրինակելի զարգացում, ինչի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել մարդու եւ բնության հավասարակշռված գոյակցությունը:

Հայաստանում սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը սովորաբար ֆինանսավորվում եւ կարգավորվում է պետության կողմից: Ցավոք այս կառույցներն իրենց մեծամասնության մեջ (հատկապես գյուղական բնակավայրերում) գտնվում են վատ վիճակում եւ պետությունը սովորաբար ի վիճակի չի լինում բավարար ֆինանսական միջոցներ հատկացնել դրանց պատշաճ պահպանման համար: Իրավիճակը նույնն է նաեւ գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» պահպանվող տարածքներին հարակից գյուղական համայնքներում: Հատկապես հեռավոր գյուղերը սովորաբար լուրջ խնդիրներ են արձանագրում նման հարցերում: Հետազոտված համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը եւ վիճակը ներկայացված է Աղյուսակ 9-ում:

Դպրոցներ աշխատում են հետազոտված ԲՀՊՏ-ների բոլոր համայնքներում՝ չնայած որոշներում (Սրաշեն, Ներքին Հանդ, Ճակատեն) աշակերտների թիվը շատ քիչ է, ինչը հետագայում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել այդ դպրոցների համար կապված բյուջեից ստացվող գումարների հետ: Որոշ դեպքերում (ինչպես օրինակ Լեռնաձորում) ներկայումս դիտարկվում է տարբեր գյուղերի դպրոցների միավորում: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում ծայրահեղ վատ է: Անհապաղ վերանորոգման կարիք ունեն բազմաթիվ դպրոցներ, կահույքի, սպորտային եւ դիդակտիկ նյութերի, որակավորված ուսուցիչների պակասն այլեւս որեւէ մեկին չի զարմացնում: Կրթության որակը անհապաղ բարելավման կարիք ունի. ներկայումս բազմաթիվ դպրոցներում մեկ ուսուցիչ կողմից դասավանդվում են մի քանի առարկաներ: *Գործող մանկապարտեզ* կա միայն Լեռնաձոր համայնքում: Մյուս համայնքները կամ պարզապես չունեն մանկապարտեզ, կամ այն դադարեցրել է իր աշխատանքը անբավարար պայմանների, ֆինանսավորման բացակայության, կամ էլ երեխաների փոքր թվի պատճառով:

Սպորտային իրավիճակը հետազոտված համայնքներում նույնքան վատ է: Որոշ կիսաքանդ հնարավորություններ առկա են միայն դպրոցական դահլիճներում, սակայն սպորտային պարագաներ չկան գրեթե ոչ մի տեղ: *Սպորտային ակումբներ* գործում են միայն Սրաշեն եւ Լեռնաձոր համայնքներում: Նույնիսկ դրանցում պարապմունքներն անցկացվում են անկանոն եւ ոչ միշտ արդյունավետ ձեւով:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում շատ վատ չէ. բոլոր համայնքներն ունեն բուժկետեր, որտեղ հատուկ վերապատրաստված բուժաշխատողների կողմից առաջին օգնության ծառայություններ են մատուցվում բնակչությանը: Ցավոք համայնքներում չկան բժիշկներ եւ բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն Կապան եւ Զաջարան քաղաքներում: Համայնքներում չկան *դեղատներ*: Որոշ համայնքներում գործում է դեղերի բաշխման ծրագիր, որի շրջանակներում համախմբված բնակիչներն ամեն եռամսյակ վճարում են 2,000 դրամ եւ օգտվում ամսական երկու անգամ ծրագրի կողմից իրենց համայնք առաքվող դեղերից: Համայնքներում չկան *շտապ օգնության մեքենաներ*. անհրաժեշտության դեպքում այս մեքենաները կանչվում են հարակից քաղաքներից՝ ընդ որում բոլոր ծախսերը հոգում են հենց իրենք՝ բնակիչները:

Համայնքների մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի. մշակութային իրադարձությունները եզակի են (դրանց մասին ասվել է միայն Լեռնաձորում): Որոշ փոքրամասշտաբ համերգներ եւ միջոցառումներ են իրականացվում համայնքների դպրոցներում՝ հիմնականում

կրթական ծրագրերի շրջանակներում: Համայնքներում բնակվում են շատ քիչ արվեստագետներ. դրանք գերադասում են հեռանալ Կապան եւ այլ վայրեր: Մարդիկ պատմում էին, որ իրենք պարզապես ձանձրանում են համայնքներում, որտեղ ոչինչ չկա անելու, չկան զվարճանքի հնարավորություններ, ինքնադրսեւորման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Այս ամենը երիտասարդ ընտանիքների համայնքներից հեռանալու լուրջ պայման է հանդիսանում:

Բոլոր համայնքներն էլ տեղակայված են պատմական վայրերում եւ հարուստ են բնական եւ պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով, խաչքարերով: Այդ ամենի առկայությունը տուրիզմի զարգացման կարելու նախապայման է հանդիսանում՝ չնայած մյուս պայմանները լուրջ բարեկարգման կարիք են զգում: Լուրջ ջանքեր պետք է ներդրվեն տուրիստական լուրջ ծառայություններ մշակելու եւ ներկայացնելու համար, եւ այդ ծառայությունները պետք է լայնորեն ներկայացվեն ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա շուկաներում:

Աղյուսակ 9 - Համայնքների ենթակառուցվածքները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ⁹

Ենթակառուցվածքներ եւ ծառայություններ	Վարդանիճոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Դպրոց	Միջն. դպրոց, 30 աշակերտ	Միջն. դպրոց, 50 աշակերտ	Միջն. դպրոց, 15 աշակերտ	Միջն. դպրոց, 29 աշակերտ	Միջն. դպրոց, 9 աշակերտ	2 դպր. (9-ամյա) 90 աշակ., եւ 2 միջն. դպր. (11-ամյա) 127 աշակ.	Միջն. դպրոց, 38 աշակերտ	Միջն. դպրոց, 7 աշակերտ
Ուսուցիչ	13-ը՝ համայնքից, 2-ը՝ Մեղրիից եւ 4-ը՝ օժանդակ կազմ	14-ը համայնքից, 5-ը Կապանից, 1-ը Երեւանից	10-ը համայնքից	9-ը համայնքից, 3-ը այլ գյուղերից, 4-ը Կապանից	5-ը համայնքից, 1-ը այլ գյուղերից, 1-ը Կապանից	31-ը համայնքից, 13-ը Կապանից, 8-ը Զաջարանից, եւ 16-ը օժանդակ կազմ: Միավորման միտում:	3-ը համայնքից, 14-ը Կապանից եւ 5-ը օժանդակ կազմ	4-ը համայնքից, 1-ը Կապանից
Մանկապարտեզ	Ժամանակավորապես դադարեցրել է գործուն. -ը ֆինանսավորման պակասի եւ վատ շենքային պայմանների պատճառով	18 երեխաներ են այցելում	Չկա	Չի գործում երեխաների պակասի պատճառով	Չկա	24 երեխաներ են այցելում: Աճման միտում կա	Չի գործում երեխաների պակասի, ծնունդների քիչ քանակի եւ վատ պայմանների պատճառով	Չկա
Սպորտային ակումբ	Չկա	Չկա	Պինգ-պոնգի խմբակ դպրոցում	Չկա	Չկա	Բասկետբոլի եւ շախմատի խմբակներ	Չկա	Չկա
Սպորտային կառույց (բացի դպրոցներից)	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	չկա	Չկա	Չկա
Առողջապահական հաստատություն	2 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 2 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 քույր	2 բուժկետ, 2 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 քուժակ
Մոտակա բժիշկը	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Զաջարանում, 500մ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ
Դեղատուն	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Զաջարանում, 1 կմ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ
Շտապ օգնության մեք.	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Զաջարանում, 300մ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ
Գրադարան	2 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող
Մշակույթի տուն	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող, վատ վիճ	1 գործող
Մշակութային իրադարձություններ	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Հազվադեպ համերգներ եւ ներկայացումներ	Չկա	Չկա
Եկեղեցիներ եւ հուշարձաններ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Արվեստագետներ	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Առկա է	Չկա	Չկա

⁹ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնալթիկ Զամփնիի հետազոտական թիմ

2.2.2 Հեռահաղորդակցություն եւ տրանսպորտային ծառայություններ

2.2.2.1 Հեռահաղորդակցություն

Ներկայիս իրականության մեջ հեռահաղորդակցության ծառայությունները գնալով ավելի հանապազօրյա անհրաժեշտություն են դառնում: Մարդիկ կանոնավոր հաղորդակցության կարիք ունեն եւ հակված են ավելի ու ավելի բարդ ծառայություններ սպառել: Եթե մի քանի տարի առաջ գծային հեռախոսակապը եւ փոստային ծառայությունները հաղորդակցման միակ միջոցներն էին գյուղական համայնքներում, ապա ներկայիս բնակչությունը ավելի ժամանակակից եւ բարդ ծառայությունների պահանջարկ է ներկայացնում: Մոբիլ հեռախոսները դարձել են առաջին անհրաժեշտության գործիքներ, համացանցային ծառայությունները լայնորեն ներդրվում եւ սպառվում են:

Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի համայնքներում հեռահաղորդակցության ծառայությունները մատուցման ամենաբարձր մակարդակի վրա չեն գտնվում: Որոշ համայնքներում դրանք պարզապես չեն գործում պատշաճ մակարդակով: Հեռահաղորդակցության ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունն ու դրանց մատուցման որակը հետազոտված համայնքներում ներկայացված է ստորել:

Աղյուսակ 10 - Հաղորդակցության ենթակառուցվածքները եւ ծառայությունները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ¹⁰

	Վարդանիձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Գծային հեռախոսակապ	Որոշ տներում	Տների 60%-ում	Որոշ տներում	Տների 90%-ում	20 տներում	Բոլոր տներում	Բոլոր տներում	Տների 70%-ում
Շարժական հեռախոսակապ	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline
Փոստային ծառայություններ	Չկա	Գործում է	Չկա	Գործում է	Չկա	3 posts operating	Չկա	Չկա
Ինտերնետ (համացանց)	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Չկա	Չկա	Շարժական հեռախոսակապի մոդեմներով: Դպրոցում եւ համայնքապետարանում	Չկա	Միայն դպրոցում
Հեռուստատեսություն	2 ալիք	3 ալիք	2 ալիք	4 ալիք	2 ալիք	5 ալիք	2 ալիք	2 ալիք
Ռադիո	Չկա	1 ալիք	1 ալիք	2 ալիք	1 ալիք	Չկա	4 ալիք	1 ալիք

SS-ների մեծամասնությունն ապահովված են մշտական *գծային հեռախոսակապով*, ինչը հեշտացնում եւ էժանացնում է հաղորդակցությունը համայնքների ներսում: Շարժական հեռախոսակապի ծառայություններն, ընդհանուր առմամբ, հասանելի են, սակայն կապի որակը վատն է հիմնականում լեռնային մակերեւույթի պատճառով: *Շարժական հեռախոսակապի* օգտագործվող հիմնական օպերատորը Vivacell-ն է, որի կապը հասանելի է գրեթե բոլոր համայնքներում: *Համացանցի* օգտագործումը լայնորեն տարածված չէ, տեղական մատակարարներ չկան: Համացանցի այնպիսի կարելուր ռեսուրսների, ինչպիսիք են Էլեկտրոնային փոստը, Skype-ը եւ այլն քիչ հասանելի են: Համացանցի սակավաթիվ օգտագործողները միանալու համար

¹⁰ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

հիմնականում օգտագործում են շարժական կապի մոդեմներ: Կարելու է նաեւ նշել, որ համացանցը հիմնականում հասանելի է բոլոր համայնքների դպրոցներում եւ համայնքապետարաններում:

Յեռուստատեսային եւ ռադիո հեռարձակումը խիստ սահմանափակ է. հասանելի են միայն մի քանի ալիքներ, այն էլ՝ ոչ շատ բարձր որակով: Յեռուստատեսային ալիքները հիմնականում ազգային են եւ դրանց օգտագործումը տեղեկացվածության բարձրացման եւ ԲՀՊՏ-ների վերաբերյալ տեղեկատվության տարածման գործողությունների նպատակով խիստ թանկ կարող է արժենալ: Յեռարձակվում է ռադիոյի ընդամենը մեկ ալիք, սակայն այն մեծ լսարան չունի եւ նպատակահարմար չէ օգտագործել տեղեկատվության տարածման նպատակով:

2.2.2.2 Ծանապարհներ եւ տրանսպորտային ծառայություններ

Յետազոտված համայնքների զարգացման պոտենցիալը բնութագրող հաջորդ գործոնները ճանապարհների վիճակն ու հասարակական տրանսպորտի առկայությունն է: Այլ պայմանների շարքում, սրանք եւս պայմանավորում են համայնքների համար շուկաների հասանելիությունը, սոցիալական ծառայությունների (կրթական, առողջապահական եւ այլն) որակը, ինչպես նաեւ որոշակիորեն բնութագրում են կոնկրետ վայրերի տուրիստական գրավչությունը: Յետազոտված համայնքներում ճանապարհների վիճակի եւ տրանսպորտի առկայության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորեւ:

Աղյուսակ 11 - Ծանապարհներ եւ տրանսպորտ¹¹

	Վարդանիճոր	Ծավ	Սրաշեն	Ծիկահող	Ներքին Յանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Դեպի մոտակա քաղաք կամ մարզկենտրոն տանող հասարակական տրանսպորտ	Օրական 2 անգամ, շաբաթական 7 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5-6 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5-6 օր	Չկա, օգտվում են Ծավի տրանսպորտից	Օրական 11 անգամ, շաբաթական 7 օր	Օրական 3 անգամ, շաբաթական 6 օր	Չկա, օգտվում են Ծավի տրանսպորտից
Դեպի հարեան համայնք տանող հասարակական տրանսպորտ	Չկա	Տես վերելի վանդակը	Տես վերելի վանդակը	Տես վերելի վանդակը	Տես վերելի վանդակը	Չկա	Չկա	Տես վերելի վանդակը
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը, որից՝								
<i>ասֆալտապատ</i>	64 կմ շատ լավ ճանապարհ	36 կմ շատ լավ ճանապարհ	30 կմ շատ լավ ճանապարհ	22 կմ շատ լավ ճանապարհ	32 կմ շատ լավ ճանապարհ	24 կմ շատ լավ ճանապարհ	5 կմ վատ ճանապարհ	9 կմ շատ լավ ճանապարհ
<i>ոչ-ասֆալտապատ</i>	-	-	-	-	5 կմ նորմալ ճանապարհ	-	-	-
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը ձմռանը, որից՝	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Լիովին անցանելի է	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Լիովին անցանելի է	Լիովին անցանելի է	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Անանցանելի է տարեկան 10 օր	Լիովին անցանելի է
Յամայնքային ճանապարհների վիճակը, որից								
<i>ասֆալտապատ</i>	-	-	-	-	-	-	10 կմ վատ ճանապարհ	1.5 կմ շատ լավ ճանապարհ
<i>ոչ-ասֆալտապատ</i>	32 կմ նորմալ ճանապարհ , 8 վատ	5 կմ նորմալ ճանապարհ , 1 վատ	2.7 կմ նորմալ ճանապարհ ,	3.5 վատ ճանապարհ	2 վատ ճանապարհ	16 կմ նորմալ ճանապարհ	-	1.9 կմ նորմալ ճանապարհ ,

¹¹ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

	ճանապարհ	ճանապարհ	1 վատ ճանապարհ					0.6 վատ ճանապարհ
--	----------	----------	----------------	--	--	--	--	------------------

Մարզկենտրոն Կապանից (այսինքն՝ նաեւ մայրաքաղաք Երեւանից) դեպի գործող «Չանգեզուր» եւ Նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերին հարակից համայնքներ տանող ճանապարհների որակն, ընդհանուր առմամբ, կամ շատ լավն է, կամ էլ՝ նորմալ է: Ծանապարհներն անցանելի են գրեթե ամբողջ տարվա ընթացքում: Այս դրական իրավիճակն ապահովվել է պետական բյուջեից եւ տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացված մեծածավալ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով: Խնդրահարույց է միայն դեպի Ներքին Հանդ տանող ճանապարհի մի հատվածը, որի որակն այնքան էլ բարձր չէ: Սա կարող է որոշակի խոչընդոտ հանդիսանալ հանրահայտ «Սոսիների Պուրակ» արգելավայրի տուրիստական լուրջ պոտենցիալի իրացման համար:

Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների եւ ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է նախ եւ առաջ համայնքների կայուն զարգացման նպատակով: Սա իրականում ԲՀՊՏ հիմնման եւ կայացման նախապայման է հանդիսանում: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում ենթակառուցվածքների զարգացումը ԲՀՊՏ-ներում տուրիզմի զարգացման կարելուորագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման զարգացման նախադրյալները դեռեւս կատարյալ չեն. համայնքային եւ միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ եւ կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային եւ էթնոտուրիզմի ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան եւ այլն:

2.3 ԱՇԽԱՏՈՒԺ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

2.3.1 Մարդկային ռեսուրսներ

Ցանկացած տիպի զարգացման ծրագրի իրականացման տեսանկյունից մարդկային ռեսուրսների առկայությունը թերեւս ամենակարեւոր նախապայմանն է հանդիսանում: Այս պնդումը ճիշտ է նաեւ ԲՀՊՏ հիմնման եւ համայնքային զարգացման պարագայում: Հետազոտվող տարածքում մարդկային ռեսուրսների առկայության ուսումնասիրության համար կիրառվել է հետեւյալ տրամաբանությունը.

- Աշխատունակ տարիքի առկա բնակչության ընդհանուր թիվը բաժանվել է *աշխատունակների եւ անաշխատունակների,*
- Աշխատունակ բնակչության ընդհանուր թիվը բաժանվել է ըստ *գրաղվածության,*
- Զբաղված բնակչության թիվը բաժանվել է ըստ *գրաղվածության տեսակների,*
- Անաշխատունակ բնակչության թիվը բաժանվել է ըստ *անաշխատունակության պատճառների:*

Բնակչության բաշխվածքի մանրամասները ներկայացված են ստորեւ:

Աղյուսակ 12 - Համայնքների մարդկային ռեսուրսները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ¹²

	Վարդա- նիժոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնա- ձոր	Գեղա- նուշ	Ճակա- տեն	Ընդա- մենը
Աշխատունակ տարիքի բնակչությունը (18 - ից բարձր)	275	354	84	148	63	861	295	157	2237
Աշխատունակ բնակչությունը, այդ թվում.	268	277	59	126	51	840	249	118	1988
Չբաղված գյուղատնտեսության մեջ	140	169	27	78	27	114	158	75	788
Չբաղված ոչ-գյուղատնտեսության մեջ	58	83	16	34	15	313	20	15	554
Չբաղված կազմակեր- պություններում, ա.թ.	50	79	15	26	15	313	18	15	531
Համայնքում	49	79	10	26	15	50	0	15	244
Համայնքից դուրս	1	0	5	0	0	263	18	0	287
Պետական	27	74	14	24	15	92	12	15	273
Մասնավոր	0	3	0	0	0	211	6	0	220
Ինքնազբաղված, ա.թ.	6	1	1	2	0	10	0	0	20
Առետրում	4	0	1	1	0	10	0	0	16
Ծառայություններում	2	1	0	1	0	0	0	0	4
Չինվորականներ	8	4	0	8	0	7	2	0	29
Չզբաղված եւ չաշխատողներ	70	25	16	14	9	413	71	28	646
Ուսանողներ	7	25	1	5	0	50	5	0	93
Գործազուրկներ	63	0	15	9	9	363	66	28	553
Անաշխատունակ բնակչությունը, այդ թվում.	7	77	25	22	12	21	46	39	249
Հաշմանդամներ	2	51	12	10	5	5	18	9	112
Թոշակառուներ	5	26	13	12	7	16	28	30	137

Աղյուսակ 12-ում ներկայացված տեղեկություններն ինքնաբավ են եւ անդրադարձ կկատարվի միայն ամենակարեւոր հարցերին: Ընդհանուր առմամբ, 18 տարեկանից բարձր աշխատունակ բնակչության մասնաբաժինը կազմում է ընդհանուր առկա բնակչության մոտ 80%-ը: Աշխատունակ տարիքի բնակչության 11.1%-ը զբաղված է տնտեսական որեւէ գործունեությամբ բարձր տարիքի կամ առողջական պատճառներով: Գործազուրկները կազմում են աշխատունակների գրեթե 28%-ը եւ այս ցուցանիշի երկու երրորդն ապահովում է Լեռնաձոր համայնքը: Այնուամենայնիվ, աշխատունակ տարիքի բնակչության գրեթե 60%-ը կամ աշխատում են, կամ էլ՝ ներգրավված են կենսապահովման գյուղատնտեսական գործունեության մեջ: Սա կարելու է բացահայտում է, քանի որ այն վկայում է, որ հետազոտված համայնքներում զգալի աշխատանքային (մարդկային) ռեսուրսներ կան, որոնք կարող են ներգրավվել գործող «Չանգեզուր» եւ Նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի հիմնման տարբեր գործողություններում:

Աշխատունակ բնակչության մոտ 40%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ, ինչն օրինաչափ է, քանի որ արգելավայրերը գտնվում են հիմնականում գյուղական վայրերում: Բոլոր ՏՏ-ներն ունեն տնամերձ հողակտորներ եւ մշակում են դրանք առնվազն կենսապահովման նպատակով:

Աշխատունակ բնակչության 27.9%-ն աշխատում է պետական եւ մասնավոր կազմակերպություններում՝ չնայած շարունակում է զբաղվել գյուղատնտեսությամբ՝ առնվազն տնամերձ հողակտորների մշակությամբ: Այստեղ եւս առաջատարը Լեռնաձոր համայնքն է: Աշխատատեղեր ապահովող պետական կազմակերպությունների շարքում կարելի է հիշատակել

¹² Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնսալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

համայնքապետարանները, կրթական, առողջապահական եւ մշակութային հաստատությունները: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ այդ կազմակերպություններում աշխատավարձերի մակարդակը բավականին ցածր է եւ մարդիկ միեւնույն է մեծապես կախված են կենսապահովման գյուղատնտեսության արդյունքներից եւ արտերկրից ստացվող աջակցությունից: Դրան հակառակ՝ մասնավոր ձեռնարկություններն առաջարկում են գյուղատնտեսական գործողությունների համար իրական այլընտրանք հանդիսացող աշխատանք՝ հատկապես լեռնահանքային ոլորտում: Սա մասնավորապես վերաբերվում է Լեռնաձոր համայնքին, որտեղ բնակչության մի ստվար մասը աշխատում է «Չանգեզուր» Պղնձամուլիբդենային Կոմբինատում: Այս ձեռնարկությունը, չնայած մեծապես վտանգում է ողջ հարավային Սյունիքի բնապահպանական իրավիճակը, այնուամենայնիվ հազարավոր աշխատատեղեր է ապահովում եւ իր աշխատողներին վճարում է նույնիսկ ողջ երկրի կտրվածքով նկատելիորեն բարձր աշխատավարձեր:

Միկրո եւ փոքր մասնավոր ձեռնարկատիրությունը բավականին թույլ է զարգացած հետազոտված համայնքներում: Ոչ գյուղատնտեսական գործունեության մեջ ինքնազբաղվածների ընդամենը 20 դեպք է արձանագրվել: Այս դեպքում եւս հստակ կենտրոնացում կա Լեռնաձոր Չամայնքում. այստեղ են աշխատում ինքնազբաղվածների մոտ կեսը:

2.3.2 Եկամուտներ եւ աղքատություն

2.3.2.1 Աղքատության մակարդակը

Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերին հարակից համայնքների առկա բնակչությունը կազմում է 2801 մարդ: ՏՏ-ների ընդհանուր քանակը 863 է, ինչը նշանակում է, որ միջին հաշվով մեկ ՏՏ անդամների թիվը կազմում է 3.3 մարդ: Այս տեղեկատվությունը ներկայացվում է հաջորդիվ իրականացված համայնքների աղքատության մակարդակի վերլուծության ամբողջական ներկայացման նպատակով: Այն ՏՏ-ները, որոնց տարեկան եկամուտները չեն գերազանցում 1,200,000 ՀՀ դրամը, համարվել են *շատ աղքատ*, քանի որ նրանք ի վիճակի չեն բավարարել պարենային զամբյուղի պահանջները: Նմանապես. այն ՏՏ-ները, որոնց տարեկան եկամուտները չեն գերազանցում 1,500,000 ՀՀ դրամը, համարվել են *աղքատ*, քանի որ նրանք ի վիճակի չեն բավարարել սպառողական զամբյուղի պահանջները:

Բնակչության եկամուտների եւ աղքատության վերաբերյալ ներկայացված տվյալները որոշակիորեն ընդհանրացված են: Հատկացված ռեսուրսների սահմանափակության պատճառով հնարավոր չի եղել բնակչության ներկայացուցչական հետազոտություն իրականացնել եւ այն փոխարինվել համայնքային արագ գնահատման մեկ այլ գործիքով, այն է՝ փորձագետների հարցազրույցներով: Պետք է նշել, որ ուսումնասիրության արդյունքները որեւէ անակնկալներ չեն բերել եւ բավականին մոտ են Հայաստանի գյուղական տարածքներին բնորոշ միջին ցուցանիշներին: Հետազոտված համայնքներում եկամուտների եւ աղքատության միջին ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 13-ում:

Չարմանալի չէ, որ ՏՏ-ների 87%-ը համարվել է աղքատ կամ շատ աղքատ: Այս ՏՏ-ների եկամուտները հիմնականում ձեւավորվում են կենսապահովման գյուղատնտեսությունից, ոչ շատ բարձր վարձատրվող աշխատանքից եւ արտերկրյա անկանոն փոխանցումներից: ԲՀՊՏ-ների հիմնման եւ զարգացման տեսանկյունից սա շատ վատ ցուցանիշ է: ԲՀՊՏ-ները սովորաբար սահմանվում են որպես բնապահպանական եւ սոցիալ-տնտեսական տեսանկյուններից կայուն զարգացող տարածքներ, ինչը, ցավոք, ներկա իրավիճակում չի կարելի ասել հետազոտվող համայնքների մասին: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվության աղբյուրները տվյալ

պարագայում սովորաբար հակված են որոշակի չափազանցումների եւ իրական իրավիճակը կարող է փոքր-ինչ ավելի դրական լինել:

Աղյուսակ 13 - ՏՏ-ների եկամուտների մակարդակը հետազոտված համայնքներում, 2010թ. ¹³

Համայնքներ	Տարեկան եկամուտներ → ՏՏ-ների հաշվով		1,200,000 ՀՀ դրամից պակաս (շատ աղքատ)	1,200,000-1,500,000 ՀՀ դրամ (աղքատ)	1,500,000-3,000,000 ՀՀ դրամ	3,000,000 ՀՀ դրամից ավել
	ՏՏ-ներ					
Վարդանիձոր	ՏՏ-ներ	127	95	15	12	5
	Մասնաբաժին	100.0%	75%	12%	9%	4%
Ծավ	ՏՏ-ներ	132	59	53	13	7
	Մասնաբաժին	100.0%	45%	40%	10%	5%
Սրաշեն	ՏՏ-ներ	32	31	1	0	0
	Մասնաբաժին	100.0%	97%	3%	0%	0%
Շիկահող	ՏՏ-ներ	60	42	18	0	0
	Մասնաբաժին	100.0%	70%	30%	0	0
Ներքին Հանդ	ՏՏ-ներ	29	3	6	16	4
	Մասնաբաժին	100.0%	9%	21%	56%	14%
Լեռնաձոր	ՏՏ-ներ	342	140	137	62	3
	Մասնաբաժին	100.0%	41%	40%	18%	1%
Գեղանուշ	ՏՏ-ներ	78	78	0	0	0
	Մասնաբաժին	100.0%	100%	0%	0%	0%
Ճակատեն	ՏՏ-ներ	63	48	15	0	0
	Մասնաբաժին	100.0%	76%	24%	0%	0%
Ընդամենը	ՏՏ-ներ	863	496	245	103	19
	Մասնաբաժին	100.0%	56.20%	30.70%	11.40%	1.70%

Աղքատ տարածաշրջաններում ԲՀՊՏ-ների հիմնումն իսկական մարտահրավեր է, քանի որ տեղական աղքատ բնակչությունը սովորաբար հակված չէ խստաբար պահպանել բնական եւ պատմամշակութային հուշարձանները եւ անխնա շահագործում է դրանք նույնիսկ չնչին եկամուտներ ստանալու ակնկալիքով: Բացի այդ, աղքատ համայնքները եւ դրանց բնակչությունը սովորաբար հակված կամ ի վիճակի չի լինում ներդրումներ կատարել մատուցվող ծառայությունների որակի, կրթական եւ առողջապահական ենթակառուցվածքների բարելավման, բնապահպանական ծրագրեր իրականացնելու նպատակով: Մարդիկ, նախ – առաջ, գերադասում են անդրադառնալ իրենց հանապազօրյա խնդիրներին:

¹³ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ համայնքների ներկայացուցիչներ

Աղյուսակ 14 - Արտերկրից ստացվող դրամական փոխանցումները, 2010թ. ¹⁴

	Վարդա- նիծոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Չանգ	Լեռնա- ծոր	Գեղա- նուշ	Ճակա- տեն	Ընդա- մենը
Արտերկրում հարազատներ ունեցող ՏՏ-ների թիվը	40	15	6	24	14	40	12	30	181
Արտերկրից դրամական փոխանցումներ ստացող ՏՏ-ների թիվը	30	15	6	5	14	12	12	13	107
Դրամական փոխանցումների միջին գումարը 1 ՏՏ հաշվով, ԱՄՆ դոլար տարեկան	850	600	1000	3000	1000	1200	600	1200	997
Դրամական փոխանցումների ընդհանուր գումարը, ԱՄՆ դոլար տարեկան	25,500	9,000	6,000	15,000	14,000	14,400	7,200	15,600	106,700

Արտերկրից ստացվող դրամական փոխանցումները տեղական բնակչության համար զգալի աջակցություն են հանդիսանում: Գնահատվել է, որ ընդհանուր առմամբ 181 ՏՏ-ներ (ամբողջի 21%-ը) հարազատներ ունեն արտերկրում եւ դրանց մոտ 60%-ը կանոնավոր դրամական փոխանցումներ են ստանում: Այստեղ անհրաժեշտ է մեկ վերապահում կատարել: Ներկայացված տվյալները ստացվել են գյուղական արագ գնահատման դաշտային աշխատանքների արդյունքում: Գնահատումն իրականացվել է սուբյեկտիվ եղանակով եւ հանդիսանում է տեղեկատվություն տվողների անձնական կարծիքը: Իրականում գրեթե անհնար է այս թեմայով ճշգրիտ դատողություններ անել, քանի որ մարդիկ սովորաբար բացարձակապես հակված չեն լինում հրապարակել իրենց եկամուտների մեծությունը:

Սույն բաժնում ներկայացված վերլուծության կարելուրագույն հետեւությունը վերաբերվում է աղքատության շատ բարձր մակարդակին: Բնակչության 85%-ից ավելին ներկա պահին աղքատ է, ինչը լրջագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ ԲՀՊՏ ստեղծման եւ ընդլայնման տեսանկյունից: Արդեն նշվել է, որ այս տարածքները պետք է մոդելային կայուն զարգացման լավագույն օրինակ հանդիսանան բնապահպանական երկարաժամկետ նպատակներ հետապնդելու համար: Այս առումով համայնքների զարգացումը լրջագույն մարտահրավեր է՝ ծառացած ինչպես ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ուղղակիորեն ներգրավված կառույցների, այնպես էլ ՀՀ Կառավարության եւ միջազգային կազմակերպությունների առջեւ: Կոնկրետ եւ մեծածավալ միջոցառումներ պետք է իրականացվեն համայնքներում աշխատատեղերի ստեղծման եւ լրացուցիչ եկամուտների գեներացման ուղղությամբ, այլապես ԲՀՊՏ գործարկումը երկարաժամկետ կտրվածքով կդառնա անհնար:

2.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2.4.1 Գյուղատնտեսական արտադրանք

2.4.1.1 Հողագործություն

Արդեն նշվել է, որ համայնքներում մշակված հողերի բաշխվածքի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացվել են ասիմետրիկ տվյալներ: Սա հիմնականում տեղի է ունեցել տարբեր տնտեսվարողների (հողատերերի) կողմից լայնորեն կիրառվող եւ հարկերի նվազեցմանը միտված գործողությունների իրականացման պատճառով: Բազմաթիվ հողատերերի կողմից մրգի եւ խաղողի

¹⁴ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ համայնքների ներկայացուցիչներ

այգիները ներկայացվում են որպես վարելահողեր (երբեմն նույնիսկ խոտհարքներ), որոնց հողի հարկի մեծությունն անհամեմատ ավելի փոքր է: Այս երեւոյթի մասին տեղեկացված են նաեւ վիճակագրական մարմինները եւ ՏԻՄ-երը, սակայն առ այսօր իրավիճակը շտկելու համար միջոցառումներ չեն իրականացվել:

Տվյալներ հավաքելու եւ դրանք պահելու վիճակը Հայաստանի գյուղական վայրերում հեռու է բավարար լինելուց: Իրականում վիճակագրական ծառայություններին ներկայացվում են զգալիորեն մոտավորեցված տեղեկություններ՝ չնայած դրանք հիմնականում արտացոլում են ընդհանուր միտումները: Միտումների տեսանկյունից, սակայն հնարավոր չէ ընդհանրացումներ կատարել բերքի ցուցանիշների վերաբերյալ՝ հիմնականում հաճախակի ցրտահարությունների, երաշտների եւ բնական այլ աղետների պատճառով: Ստորեւ բերված աղյուսակներում ներկայացված են հետազոտված համայնքներում հողագործության հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 15 - Հողագործության մակերեսները եւ բերքի քանակները, 2010թ.¹⁵

Կուլտուրաներ		Հացահատիկ	Ընդեղեն	Կարտոֆիլ	Բանջարեղեն	Կերային
Վարդանիճոր	Տարածք, հա	0.5	3.0	8.0	15.2	22.1
	Բերք, կգ	500	3,300	9,600	78,600	25,000
Ծավ	Տարածք, հա	0.0	3.0	25.0	4.2	75.0
	Բերք, կգ	0	6,000	375,000	50,600	150,000
Սրաշեն	Տարածք, հա	77.5	1.0	1.5	2.0	30.3
	Բերք, կգ	58,100	2,000	18,000	24,000	60,000
Շիկահող	Տարածք, հա	37.6	1.5	6.0	4.5	125.0
	Բերք, կգ	17,500	4,500	90,000	54,000	250,000
Ներքին Հանդ	Տարածք, հա	39.0	0.5	4.0	2.0	80.0
	Բերք, կգ	45,800	1,500	6,000	24,000	150,000
Լեռնաձոր	Տարածք, հա	5.0	13.0	26.0	4.2	112.0
	Բերք, կգ	3,000	26,000	315,000	42,000	250,000
Գեղանուշ	Տարածք, հա	0.0	3.0	6.0	5.0	101.0
	Բերք, կգ	0	6,000	98,000	58,000	200,000
Ճակատեն	Տարածք, հա	15.0	8.0	7.0	13.0	169.0
	Բերք, կգ	6,000	24,000	105,000	156,000	410,000
Ընդամենը	Տարածք, հա	174.6	33.0	83.5	50.1	714.4
	Բերք, կգ	130,900	73,300	1,016,600	487,200	1,495,000

Ցորենի մշակությունը հետազոտված համայնքներում կազմում է հացահատիկի արտադրության երկու երրորդը հեշտ մշակության պատճառով: Հացահատիկը մշակվում է հիմնականում կենսապահովման նպատակով,բերքատվության մակարդակը շատ ցածր է իրագործելի եւ շահութաբեր առեւտրային մշակություն կազմակերպելու համար: Ցորենի մշակությունը հիմնականում կենտրոնացած է Շիկահող, Սրաշեն եւ Ներքին Հանդ համայնքներում: Մյուսները կամ համապատասխան հողեր չունեն, կամ էլ մյուս ռեսուրսները չեն բավարարում՝ ֆինանսները, սերմերը, պարարտանյութերը, մեխանիզացիան եւ այլն:

¹⁵ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱԿԾ Սյունիքի մարզի գործակալություն

Ընդդեմի մշակությունը եւս կենսապահովման բնույթի է. շատ քիչ քանակություն է իրականում իրացվում: Աղյուսակում ներկայացված ընդդեմի ցուցանիշներն իրականում վերաբերվում են լոբուն: Ջետագուտված համայնքներից որոշները հայտնի են այդտեղ արտադրվող կարտոֆիլով. քանակները բավականին մեծ են, առետրայնության մակարդակը՝ բարձր: Չգալի քանակությամբ կարտոֆիլ է վաճառվում Կապանի եւ Քաջարանի շուկաներում: Մասնավորապես Շիշկերտ գյուղում աճեցված կարտոֆիլը շատ բարձր որակի է, հատուկ պահանջված է եւ իրացվում է համեմատաբար բարձր գներով: Սա մրցակցային առավելություն է, որը պետք է զարգացվի:

Բանջարեղենի արտադրության ծավալները եւ մեծ են: Հիմնական տեսակներից են կաղամբը, վարունգը, պոմիդորը, գազարը, սոխը եւ այլն: Մշակությունն հիմնականում կատարվում է տնամերձ հողամասերում եւ նախատեսվում է կենսապահովման համար: Իրավիճակն այլ է կերային կուլտուրաների պարագայում: Օգտագործման քանակները բավականին մեծ են, քանի որ ինտենսիվ մշակության ջանքեր եւ ծախսեր չեն պահանջվում: Սովորաբար ֆերմերները պարզապես քաղում են դրանք խոտհարքներում եւ օգտագործում անասունների կերակրման նպատակով:

Ջետագուտված ցածրադիր համայնքների բնակլիմայական պայմանները լավ նախադրյալներ են ստեղծում բարձրարժեք գյուղատնտեսության, այն է՝ մրգերի, ընկույզի եւ նույնիսկ խաղողի արտադրության համար: Որոշ ապրանքատեսակների արտադրության գծով՝ օրինակ՝ մերձար-ադարձային մրգերի, Սյունիքի մարզի այս հատվածներն անվիճելի առաջատար են հանդիսանում: Աղյուսակ 16-ում ներկայացված է այգետարածքների բաշխվածքն ըստ տարբեր մրգատեսակների: Բերված տվյալների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հիշել մի կարեւոր հանգամանք. աղյուսակում ներկայացված են 2010թ. ցուցանիշները, երբ գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը կորցվել է ցրտահարությունների եւ կարկտահարության պատճառով: Նման ցրտահարությունները Հայաստանում պատահում են կանոնավոր ձեւով՝ 3-4 տարին մեկ անգամ:

Աղյուսակ 16 - Մրգի մշակության տարածքները եւ բերքը, 2010թ.¹⁶

Կուլտուրաներ		Հնդավորներ	Կորիզա-պտուղներ	Ընկույզ	Մերձաւե-դարձային	Հատա-պտուղներ	Խաղող (տեխն. սորտ)	Ամբողջը
Վարդանիձոր	Տարածք, հա	5.0	13.4	4.9	0.5	3.1	0.6	27.5
	Բերքատու, հա	2.5	5.0	2.8	0.5	1.6	0.5	12.9
	Բերք, կգ	50	80	1,700	1,500	250	160	3,740
Ծավ	Տարածք, հա	5.5	2.1	0.6	0.4	0.4	0.1	9.1
	Բերքատու, հա	4.4	2.1	0.5	0.4	0.4	0.1	7.9
	Բերք, կգ	0	300	900	400	2,000	3,000	6,600
Սրաշեն	Տարածք, հա	4.5	0.4	0.9	0.3	0.4	0.2	6.7
	Բերքատու, հա	4.4	0.4	0.9	0.3	0.3	0.2	6.5
	Բերք, կգ	700	600	13	100	1,000	800	3,213
Շիկահող	Տարածք, հա	5.2	3.5	3.3	0.3	0.3	0.3	12.9
	Բերքատու, հա	5.2	3.5	3.3	0.3	0.3	0.3	12.9
	Բերք, կգ	2,000	100	700	200	6,000	300	9,300
Ներքին Հանդ	Տարածք, հա	0.4	0.2	1.1	0.4	0.2	0.2	2.5
	Բերքատու, հա	0.3	0.2	1.1	0.2	0.2	0.2	2.2
	Բերք, կգ	1,000	1,500	700	1,600	3,000	3,000	10,800

¹⁶ Աղբյուր՝ համայնքապետարաններ եւ ԱՎԾ Սյունիքի մարզի գործակալություն

Լեռնաձոր	Տարածք, հա	3.9	2.5	1.0	0.0	0.7	0.0	8.1
	Բերքատու, հա	3.9	2.5	1.0	0.0	0.7	0.0	8.1
	Բերք, կգ	0	0	0	0	1,100	0	1,100
Գեղանուշ	Տարածք, հա	7.5	1.4	5.1	0.7	0.5	0.5	15.7
	Բերքատու, հա	3.4	0.8	4.8	0.6	0.5	0.4	10.5
	Բերք, կգ	200	500	1,100	100	1,900	1,200	5,000
Ճակատեն	Տարածք, հա	4.8	2.5	2.0	0.0	2.0	0.7	12
	Բերքատու, հա	4.8	2.5	2.0	0.0	2.0	0.7	12
	Բերք, կգ	800	800	1,300	0	5,100	500	8,500
Ընդհանուր	Տարածք, հա	36.8	26.0	18.9	2.6	7.6	2.5	94.4
	Բերքատու, հա	28.9	17.0	16.4	2.4	6.0	2.4	73.1
	Բերք, կգ	4,750	3,880	6,413	3,900	20,350	8,960	48,253

Այս դեպքում եւս կիրառվել է որոշ ցուցանիշների ընդհանրացում եւ մոտավորեցում: Տարբերություններն այս անգամ պայմանավորված են այգիների ընդհանուր մակերեսների եւ դրանցում արտադրական տարիքի այգիների (այսինքն՝ բերքատու) անհամապատասխանությամբ՝ չնայած ոչ մեծ:

Այգետարածքների որոշակի կենտրոնացում է նկատվում Վարդանիձոր եւ Գեղանուշ համայնքներում՝ չնայած դրանց մի մասը վերջերս տնկված երիտասարդ եւ ոչ բերքատու այգիներ են: Ընդհանուր առմամբ՝ այգետարածքների ընդամենը 77%-ն են բերքատու, ինչը սակայն նշանակում է այգիներ հիմնելու միտում է արձանագրվել վերջին մի քանի տարիներում: Այսինքն՝ ֆերմերները այգեգործությունը դիտարկում են որպես խոստումնալից եւ եկամտաբեր գործունեություն:

Ջետազոտված համայնքներում *հնդավոր* մրգերը ներկայացված են իսնձորով, տանձով եւ որակի քանակությամբ սերկելիլով: Այս մրգերն աճեցվում են ինչպես կենսապահովման, այնպես էլ առելուրային նպատակներով: Իրավիճակը գրեթե նույնն է նաեւ կորիզապտուղների պարագայում: Կորիզապտուղներից ներկայացված են կեռասը, սալորը, հոնը, ինչպես նաեւ որոշակի քանակներով ծիրանը եւ դեղձը:

Ընկույզի մշակությունը մեծ պոտենցիալ ունի հետազոտված համայնքներում: Առաջատարներն են Գեղանուշը, Շիկահողը եւ Վարդանիձորը: Կրկին նկատվում է նոր այգիների հիմնման միտում: Չնայած հայկական ընկույզը մրցունակ չի համարվում արտերկրում, այն մեծապես պահանջված է ներքին շուկայում: Ամեն տարի Ամանորի տոնակատարության շեմին հսկայական քանակությամբ ընկույզ է իրացվում՝ առաջացնելով իրացումների ծավալների բազմապատիկ աճ եւ գների թանկացում: Ընկույզի մշակությունը կարող է դիտարկվել որպես լուրջ պոտենցիալ ունեցող գյուղատնտեսական գործունեություն:

Մերձարեւադարձային պտուղների մշակության ծավալները մեծ չեն, քանի որ համայնքների մեծ մասը բարձրադիր են: Լավագույն պայմաններն այս պտղատեսակների՝ հատկապես արքայանարինջի եւ նռան աճեցման համար ունեն Ներքին Յանդն ու Վարդանիձորը: Այս երկու մրգատեսակները խիստ պահանջված են եւ վաճառվում են բավականին բարձր գներով: Այս կուլտուրաների աճեցումը նշված համայնքներում՝ առկա պահանջարկի եւ իրացման լուրջ խնդիրների բացակայությամբ պայմանավորված, կարող է համարվել զարգացման լրջագույն պոտենցիալ ունեցող գյուղատնտեսական գործունեություն:

Հատապտուղների արտադրության ծավալները վերաբերվում են միայն թթին: Այն հիմնականում աճեցվում է տնամերձ հողամասերում եւ օգտագործվում է կենսապահովման, ինչպես նաեւ թթի օղու արտադրության նպատակներով: Թթի օղին Հայաստանում համարվում է բարձրարժեք արտադրանք եւ բարձր որակի պարագայում մեծապես պահանջված է: Իրականում օղու արտադրությունը թթի օգտագործման լավագույն եղանակն է, քանի որ այս հատապտղի պիտանիության ժամկետը շատ կարճ է՝ ընդամենը մի քանի ժամ: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ հատապտուղների ցանկը սիսալ է սահմանափակել բացառապես թթով: Այլ տեսակների զգալի քանակություններ հավաքվում են անտառային հատվածներում ինչպես կենսապահովման, այնպես էլ առելուրային նպատակներով: Ցավոք վայրի հավաքվող հատապտուղների ծավալների վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ չկան եւ նույնիսկ մոտավորապես գնահատում հնարավոր չէ իրականացնել՝ չնայած այս հատապտուղները որոշ ընտանիքների համար եկամուտների զգալի մասնաբաժին են ապահովում

2.4.1.2 Անասնապահություն

Հետազոտված համայնքներում բնակչության հետազոտության արդյունքում կարելի է եզրակացնել, որ հիմնականում կենսապահովման բնույթ ունեցող գյուղատնտեսական գործողությունները հանդիսանում են տեղական ՏՏ-ների եկամուտների հիմնական աղբյուրը: Բացառություն է հանդիսանում թերուս միայն Լեռնաձոր համայնքը, որտեղ բնակչության մի ստվար մասն աշխատում է լեռնահանքային արդյունաբերության մեջ: Անասնապահությունը հիշատակված գյուղատնտեսական գործունեության կարեւոր բաղադրիչներից է: Անասնապահության զարգացման կարեւորագույն նախապայմանը անասնազխաքանակի առկայությունն է, որը հետազոտված համայնքների մասով ներկայացված է Աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17 - Անասնազխաքանակը, 2011թ. հունվարի է-ի դրությամբ¹⁷

Կենդանիներ	Վարդա- նիձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնա- ձոր	Գեղա- լուշ	Ճակա- տեն	Ընդա- մենը
ԽԵԱ, այդ թվում՝	142	177	64	123	103	425	287	215	1,536
Կով	47	89	32	59	55	234	124	87	727
Արտադրող ցուլ	6	6	2	16	12	19	5	2	68
Երինջ, 1-2 տարեկան	25	60	5	28	25	110	20	69	342
Երինջ, 2 տար. բարձր	1	22	4	20	20	62	7	35	171
Այլ (հորթեր)	20	0	1	0	0	0	0	11	32
Խոզ, այդ թվում՝	31	0	16	31	15	35	58	22	208
Մայր խոզ	6	0	2	23	6	6	10	4	57
Շրիշակ՝ 4-12 ամսական	24	0	5	8	9	29	48	18	141
Ոչխար, այդ թվում՝	418	257	58	201	115	915	75	0	2,039
Մաքի	337	227	43	166	80	590	51	0	1,494
Գառ	30	30	15	35	35	325	24	0	494
Այծ, այդ թվում՝	68	110	37	96	57	105	30	0	503
Մայր այծ	61	110	29	88	20	70	20	0	398
Այլ	9	9	2	2	2	17	38	6	85
Ձի	4	5	0	9	0	28	12	8	66

¹⁷ Աղբյուր՝ Համայնքապետարանների եւ ԱՎԾ Սյունիքի մարզի գործակալություն

Ձորի	0	0	0	0	0	0	3	0	3
Ճագար	0	0	0	50	4	0	0	0	54
Մեղվաընտանիք	209	573	70	211	216	889	236	179	2,583
Թռչում, այդ թվում՝	465	561	262	383	357	1,302	456	685	4,471
Չավեր եւ աքլորներ, ա.թ.՝	465	561	262	358	357	1,302	456	685	4,446
<i>Արտադրող հավեր</i>	<i>453</i>	<i>557</i>	<i>199</i>	<i>326</i>	<i>257</i>	<i>1,138</i>	<i>250</i>	<i>570</i>	<i>3,750</i>

Մինչեւ հետազոտված համայնքներում անասնապահության վիճակը քննարկելը անհրաժեշտ է կրկին անդրադառնալ անասնազխաքանակի վերաբերյալ տվյալների որակին: Տեղեկությունները հավաքվել են համայնքապետարաններից եւ համեմատվել են վիճակագրական տվյալների հետ: Ընդհանուր առմամբ դրանք համընկնում են, բայց որոշ հարցեր պետք է նկատի ունենալ: Բազմաթիվ ՏՏ-ներ մասնակցում են աղքատներին միտված եւ պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական աջակցության ծրագրերի: Նույնիսկ 1 կենդանի ունենալը այդ տնտեսություններին կարող է դուրս մղել այդ ծրագրերից, եւ ՏՏ-ները երբեմն գերադասում են չգրանցել իրենց անասունները: Այլ կերպ ասած՝ ներկայացված թվերը կարող են դիտարկվել որպես նվազագույն գլխաքանակ, իսկ իրականում գլխաքանակը կարող է մի փոքր ավելի շատ լինել:

Անասնապահության ծավալներով ակնհայտ առաջատարը Լեռնաձոր համայնքն է, ինչը կարող է պայմանավորված լինել համայնքի համեմատաբար մեծ ծավալներով: Գրեթե բոլոր կենդանիների մասով անասնազխաքանակն այս համայնքում ամենամեծն է: Չնայած դրան՝ մեկ ՏՏ հաշվով անասնազխաքանակի մեծության տեսանկյունից այս համայնքն առաջատար դիրքեր չունի: Այս տեսանկյունից ԽԵԸ գլխաքանակով առաջատարը Գեղանուշն եւ Ճակատեն համայնքներն են: Դրա պատճառը կարող է լինել այս համայնքների ավելի մոտ տեղակայվածությունը իրացման շուկային՝ Կապանին: Ընդհանուր առմամբ ԽԵԸ գլխաքանակում կովերը կազմում են մոտ 50%:

Խոզաբուծությունը հետազոտված համայնքներում շատ զարգացած չէ, ինչը հաստատվում է խոզերի փոքր գլխաքանակով: Միեւնույն ժամանակ, այս իրավիճակը կարող է պայմանավորված լինել վերջին ժամանակահատվածում այս կենդանիների հիվանդությունների տարածմամբ եւ գլխաքանակի կտրուկ նվազմամբ: Չուգահեռաբար, բացառված չէ նաեւ գլխաքանակի վերաբերյալ ոչ ամբողջական տվյալների հաղորդումը համայնքների ներկայացուցիչների կողմից: Ոչխարաբուծությունն ավելի զարգացած է եւ ամենամեծ գլխաքանակը կրկին Լեռնաձոր համայնքում է: Մեկ ՏՏ հաշվով ամենամեծ միջին գլխաքանակը Ներքին Չանդում է արձանագրվել: Ոչխարաբուծության հիմնական արդյունքները բուրդը եւ գառներն են հանդիսանում: Ոչխարի կաթի արտադրության ծավալները բավականին փոքր են եւ առետրային նշանակություն ունեն միայն Վարդանիձորում: Այծաբուծության ծավալները բավականին փոքր են եւ կրկին կենտրոնացած են Վարդանիձորում: Մյուս համայնքները տեղեկացրել են, որ այծաբուծության արտադրանքը (հիմնականում կաթը) սպառվում է ՏՏ-ների ներսում:

Չարգացման լուրջ պոտենցիալ եւ մեծ տարածում ունեցող գյուղատնտեսական գործունեության հաջորդ տեսակը մեղվապահությունն է: Չետազոտված համայնքներում մեղվաընտանիքների քանակը բավականին մեծ է մյուս անասունների գլխաքանակի համեմատությամբ: Մեղը Չայաստանում (մասնավորապես Սյունիքում նույնպես) յուրօրինակ ապրանք է համարվում, որն անմնացորդ վաճառվում է բավականին մեծ քանակությամբ եւ առանց մեծ ջանքերի: Չարավային Սյունիքում հաջող գործունեություն է իրականացնում մեղվաբույծների միությունը, որը մեծապես նպաստում է մեղվաբուծության զարգացմանը մարզում:

Աղյուսակ 18 - Անասնապահական արտադրանքը, 2010թ. ¹⁸

Արտադրանք	Միավոր	Վարդա- նիժոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Ֆանդ	Լեռնա- ձոր	Գեղա- նուշ	Ճակա- տեն	Ընդա- մենը
Կովի կաթ	լիտր	100,000	200,000	30,000	120,000	4,800	280,000	120,000	34,000	888,800
Ոչխարի կաթ	լիտր	91,000	0	0	0	0	0	0	0	91,000
Այծի կաթ	լիտր	22,000	0	0	0	0	0	0	0	22,000
Տավարի միս	կգ	3,000	5,000	1,100	4,000	6,400	10,000	15,000	6,000	50,500
Խոզի միս	կգ	960	0	0	0	0	1,000	1,000	1,000	3,960
Ոչխարի միս	կգ	180	3,000	600	1,000	500	22,000	240	0	27,520
Այծի միս	կգ	180	250	500	400	100	400	100	0	1,930
Հավի միս	կգ	300	150	100	200	120	600	100	150	1,720
Ձու	հատ	45,300	38,000	13,000	45,000	3,500	125,000	25,000	3,000	297,800
Մեղր	կգ	1,500	7,000	420	1,000	3,000	8,000	700	800	22,420

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ համայնքները անասնապահական արտադրանքի վերաբերյալ վիճակագրություն հիմնականում չեն հավաքում: Պաշտոնական վիճակագրությունը սովորաբար որդեգրում է հետեւյալ մոտեցումը. կենդանիների գլխաքանակը բազմապատկվում է տվյալ տարածաշրջանի համար արտադրողականության միջին ցուցանիշներով: Սա շատ կոպիտ մոտեցում է եւ չի արտացոլում իրականությունը: Որոշում է ընդունվել հիմնվել համայնքներից ստացված գնահատականների վրա ինչպես արտադրանքի քանակի, այնպես էլ՝ դրա առեւտրայնության մակարդակների պարագայում:

Հետազոտված համայնքներում կովի կաթի արտադրության ծավալները գնահատվում են 900 տոննայի սահմաններում, ինչն այնքան էլ բարձր ցուցանիշ չէ: Համեմատության համար նշենք, որ տարբեր կոոպերատիվների կողմից հիմնվող կաթի մթերման կետերի նվազագույն հզորությունը հենց այսքան է: Հետազոտված համայնքներում հիմնվել են կաթի մթերման եւ վերամշակման մի քանի միավորներ, որոնք սակայն ներկա պահին դադարեցրել են իրենց գործունեությունը: Կաթի առեւտրայնության առումով որեւէ ընդհանրական միտում չի արձանագրվել. համայնքից համայնք այն տատանվում է 20%-70%-ի սահմաններում: Սովորաբար ՏՏ-ներն արտադրված կաթը վերամշակում են պանրի, մածուկի, թթվասերի եւ իրացնում քաղաքային համայնքներում՝ այցելելով քաղաքների գրեթե բոլոր բնակելի շենքերը: Որոշ տնտեսություններ նույնիսկ պատվերների հստակ եւ անխափան աշխատող համակարգ են ձեւավորել են: Արդեն նշվել է, որ ոչխարի եւ այծի կաթի առեւտրային արտադրություն արձանագրվել է միայն Վարդանիժորում եւ առեւտրայնության գործակիցը կազմել է 50%:

Մսի առեւտրայնության մակարդակը տատանվում է 80%-90%-ի սահմաններում: Բոլոր տեսակների մսի իրացումների ամենամեծ ծավալներն արձանագրվում են բացօթյա միջոցառումների մասսայական իրականացման (հիմնականում ամռանը) եւ Ամառորի տոների սեզոններին: Հավի մսի սպառման ծավալները քիչ թե շատ կայուն են ամբողջ տարվա ընթացքում: Մսի արտադրության ծավալներով առաջատարներ են Ծավ, Լեռնաձոր եւ Գեղանուշ համայնքները:

Վերջին գյուղատնտեսական արտադրանքը, որին ցանկանում ենք անդրադառնալ, մեղրն է: Առեւտրայնության մակարդակը տատանվում է 50%- 80%-ի սահմաններում, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Իրականում զգալի քանակությամբ մեղր գնելը հնարավոր չէ հետազոտված համայնքներում սեպտեմբեր-հոկտեմբերի ամիսներից հետո: Հետազոտական թիմի կողմից

¹⁸ Աղբյուր՝ համայնքապետարաններ

փորձնական գնում իրականացնելու փորձերը Շիկահող, Սրաշեն, Ներքին Յանդ համայնքներում պսակվեցին գրեթե ամբողջական անհաջողությամբ. 3,000 դրամ/կգ գնով հնարավոր եղավ երեք համայնքներում գնել երեք կգ մեղր: Մեղրի գները Յայաստանում անհիմն բարձր են, սակայն այս ապրանքի պահանջարկը միեւնույն է շատ մեծ է: Իրացման ուղիները թույլ են զարգացած՝ չկա մակնիշում, փաթեթավորումը թույլ է, համային եւ որակական վերահսկողություն եւ փորձարկում չի իրականացվում, փաթեթավորումը սահմանափակվում է ապակյա հասարակ տարաներով: Չնայած այս ամենին՝ այս ապրանքը միեւնույն է իրացվում է շատ բարձր գներով: Այսպիսով՝ մեղվապահությունը եւ մեղրի արտադրությունը հետազոտված համայնքներում զարգացման լուրջ պոտենցիալ ունեն:

Արդեն նշվել է, որ գյուղատնտեսության զարգացումը հանդիսանում է հետազոտված համայնքներում բնակչության եկամուտների բարձրացման հիմնական հնարավորություններից մեկը: Արդեն իսկ կարելի է առանձնացնել գյուղատնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ապահովում են բարձրարժեք եւ առևտրայնության բարձր մակարդակ ունեցող մթերքների արտադրություն: Նման ապրանքների շարքում կարելի է թվարկել կարտոֆիլը, մերձարեւադարձային մրգատեսակները, ընկույզը, հատապտուղները, միսը եւ մեղրը: Յամապատասխան մասնագիտական եւ ֆինանսական աջակցության պարագայում տեղական բնակչությունն ի վիճակի է բազմապատկել գյուղատնտեսական գործունեության ծավալները: Առևտրայնության բարձր մակարդակը այս արտադրանքի իրացման երաշխիք է հանդիսանում, ինչն ուղղակիորեն կնպաստի բնակչության եկամուտների աճին:

Գյուղատնտեսության զարգացումը լուրջ ներդրում կարող է ունենալ նաեւ տուրիզմի զարգացման տեսանկյունից: Նախ – առաջ, այն թույլ կտա տուրիստներին առաջարկել թարմ եւ էկոլոգիապես մաքուր սնունդ: Միեւնույն ժամանակ գյուղատնտեսության հիմքի վրա կարելի է մշակել հատուկ ագրոտուրիստական ծառայություններ, որոնք ներկայումս բավականին պահանջված են հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում:

Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինտենսիվ գյուղատնտեսության վարումը որոշակի առումով հակասում է ԲՀՊՏ-ների զարգացման դրույթներին: Սա նշանակում է, որ գործընթացում ներգրավված կառույցները պետք է որոշակի վերահսկողություն իրականացնեն հատկապես հողերի մեխանիզացված մշակման, թունաքիմիկատների եւ պարարտանյութերի օգտագործման, տնային կենդանիների արածեցման եւ այլ գործողությունների նկատմամբ:

2.4.2 Գյուղատնտեսական ենթակառուցվածքներ

Գյուղատնտեսությունը սահմանվել է որպես հետազոտված համայնքների բնակչության հիմնական զբաղվածություն: Բացառություն է կազմում միայն Լեռնաձոր համայնքը, որտեղ բնակչության մի զգալի մասը ներգրավված է հանքարդյունահանման ոլորտում: Նախորդ բաժիններում սահմանվել են հետազոտված 8 համայնքներում գյուղատնտեսության առավել մեծ պոտենցիալ ունեցող ուղղությունները: Սակայն պետք է նաեւ նշել, որ զարգացման հնարավորությունները մեծապես կախված են տվյալ համայնքներում գյուղատնտեսական ենթակառուցվածքների առկայությունից եւ դրանց վիճակից: Մասնավորապես՝ ոռոգման համակարգի, անասնաբուժական ծառայությունների, գյուղատնտեսի ծառայությունների, մեխանիզացիայի, եւ այլն: Ստորեւ ներկայացված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում:

Աղյուսակ 19 - Գյուղատնտեսական ենթակառուցվածքների առկայությունը եւ վիճակը, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ¹⁹

Գյուղատնտ. ենթակառուցվածքներ	Ոռոգման ջուր	Անասնաբուժական ծառայություններ	Գյուղատնտեսի ծառայություններ	Սառնարանային պահեստ	Կաթի մթերման կետ	Տրակտոր	Կոմբայն	Բեռատար (ներառյալ շինարարական)
Վարդանիձոր	Մատչելի է եւ բավարար	Մատչելի են	Չկան	Չկա	Չկա	2 միավոր (2 գործող)	Չկան	2 միավոր (2 գործող)
Ծավ	Մատչելի է եւ բավարար SS-ների 60%-ի համար	Մատչելի են	Մատչելի են	Չկա	Կա, բայց չի գործում, 800 կգ/օր	4 միավոր (4 գործող)	Չկան	7 միավոր (գործող)
Սրաշեն	Չկա	Մատչելի են	Մատչելի են	Չկա	Չկա	3 միավոր (3 գործող)	1 միավոր (1 գործող)	4 միավոր (4 գործող)
Շիկահող	Չկա	Մատչելի են	Չկան	Չկա	Չկա	14 միավոր (11 գործող)	1 միավոր (չգործող)	7 միավոր (7 գործող)
Ներքին Յանդ	Մատչելի է, բայց ոչ բավարար	Մատչելի են	Չկան	Չկա	Գործում է անկանոն, 500 կգ/օր	2 միավոր (չգործող)	Չկան	5 միավոր (5 գործող)
Լեռնաձոր	Մատչելի է, բայց ոչ բավարար	Մատչելի են	Չկան	Չկա	Չկա	13 միավոր (12 գործող)	Չկան	28 միավոր (28 գործող)
Գեղանուշ	Մատչելի է, բայց ոչ բավարար	Մատչելի են	Չկան	Չկա	Չկա	2 միավոր (չգործող)	Չկան	4 միավոր (չգործող)
Ճակատեն	Չկա	Մատչելի են	Չկան	Չկա	Գործում է, 500 կգ/օր	8 միավոր (2 գործող)	1 միավոր (չգործող)	4 միավոր (4 գործող)

Ոռոգման ջուրը լիովին հասանելի է միայն Վարդանիձորում եւ Գեղանուշում՝ ինչը հաստատվում է նաեւ այս համայնքներում հողագործության զարգացվածությամբ: Ոռոգման բացակայությունը հատկապես կարելի է հասկանալ Ծավում, Շիկահողում եւ Սրաշենում: Խորհրդային ժամանակահատվածում Ներքին Յանդ եւ Ճակատեն համայնքների միջեւ գործել է ոռոգման ջրի մատակարարման լուրջ համակարգ, որն անկախացումից հետո փոշիացվել է: Ներկայումս այս համայնքների բնակչությունը ոռոգման ջրի բացակայությունը համարում է զարգացման համայնքների զարգացման հիմնական խոչընդոտը: Ծավում SS-ների 40%-ի համար ոռոգումն անհասանելի է, Ներքին Յանդում 103 հա վարելահողեր չեն մշակվում նույն պատճառով: Համայնքներում, որտեղ ոռոգման համակարգը մասնակիորեն է գործում, արձանագրվել են նաեւ ոռոգման ջրի անարդյունավետ կառավարման դեպքեր:

Բոլոր համայնքներն ունեն անասնաբույժներ եւ բավարարված են սրանց ծառայություններով: Գյուղատնտեսներ կան միայն Ծավում եւ Սրաշենում, մյուս համայնքները համապատասխան ռեսուրսներ չեն կարողացել հայթայթել: Գյուղատնտեսների սակավությունը սակայն տեղական բնակչության կողմից մեծ խնդիր չի համարվել: Գյուղացիները պարզապես գերադասում են ինքնուրույն որոշումներ ընդունել գյուղատնտեսական մշակության եղանակների վերաբերյալ:

¹⁹ Աղբյուր՝ Համայնքապետարաններ եւ ԱՄ Փարթնըրզ Զոնալթինգ Զամփնիի հետազոտական թիմ

Չետագոտված համայնքներում գործում են խիստ սակավաթիվ շուկայամետ ենթակառուցվածքներ: Ծավի պանրագործարանը գրեթե չի աշխատում արդեն մի քանի տարի, կաթի մթերման կետը Ներքին Չանդում գործում է անկանոն եւ միշտ խնդիրներ է ունենում կաթի մթերման գների սահմանման հետ: Երկու կառույցներն էլ հիմնվել են միջազգային դոնոր ծրագրի ներքո, որը նաեւ գյուղատնտեսական ապրանքների մանրածախ վաճառք է իրականացնում Կապան քաղաքում գործող խանութի միջոցով: Վաճառվող ապրանքների մի մասը գնվում է հենց հետագոտված համայնքներից:

Բարձր արտադրողականությունն ունեցող ժամանակակից գյուղատնտեսական մեխանիզացիայի սակավությունը եւ վարձակալության թանկարժեքությունը հետագոտված համայնքներում գյուղատնտեսական զարգացումը խոչընդոտող հաջորդ հանգամանքն է հանդիսանում: Չնացած մեխանիզացիան սովորաբար հողի անարդյունավետ մշակության եւ բերքի զգալի կորուստների պատճառ է դառնում: Շիկահողի տարածաշրջանի համայնքները օժանդակություն են խնդրել մեխանիզացիայի կենտրոնացված պարկի հիմնման նպատակով, որը կշահագործվի բոլոր հինգ համայնքների շահերը ներկայացնող կառույցի կողմից:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ բոլոր համայնքներն էլ գյուղատնտեսական զարգացման լուրջ պոտենցիալ են տեսնում իրենց մեջ: Չամայնքապետերը եւ համայնքում հեղինակություն վայելող այլ բնակիչներ մատնանշել են, որ Վարդանիձոր, Ծավ եւ Գեղանուշ համայնքներում կան չմշակվող վարելահողեր (հատկապես հացահատիկի եւ կարտոֆիլի մշակությանը հարմար), հարմար այգետարածքներ Ներքին Չանդում եւ Վարդանիձորում, անասնապահության զարգացման լավ նախադրյալներ ճակատենում, Գեղանուշում եւ Լեռնաձորում: Վերջապես՝ մեղվաբուծությունը զարգացման մեծ պոտենցիալ ունի հետագոտված բոլոր համայնքներում:

Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնների շարքում համայնքները նշել են *ոռոգման անբավարար մակարդակը, գյուղատնտեսական հումքի (բարձրորակ սերմերի, պարարտանյութերի եւ թունաքիմիկատների) ցածր հասանելիությունը, վառելիքի թանկությունը, գյուղատնտեսական մեխանիզացիայի անբավարար մակարդակը, մեքենաների վարձակալության բարձր վճարները, կոնկրետ տարածքների գերօգտագործումը*:

2.5 ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չետագոտված համայնքներում կոմունալ ծառայությունների ուսումնասիրությունն անդրադարձել է բնական գազի, էլեկտրաէներգիայի եւ խմելու ջրի մատակարարման, աղբահանության եւ կեղտաջրերի հեռացման ծառայությունների առկայությանը եւ կանոնավորությանը: Այս ծառայությունների առկայությունը տվյալն համայնքներում SS-ների կենսամակարդակի եւ ապրելակերպի բնորոշման հետաքրքիր բնութագրիչներ են հանդիսանում:

Բնական գազի մատակարարումը բնապահպանական տեսանկյունից ամենակարելի կոմունալ ծառայությունն է հանդիսանում: Ներկայումս լայնորեն տարածված կարծիք կա, որ ջեռուցման այլընտրանքային աղբյուր ունենալու պարագայում անտառամերձ համայնքների բնակչությունը սահմանափակում (սվազեցնում) է վառելափայտի օգտագործումը խոհանոցային եւ ջեռուցման (հատկապես ձմռանը) նպատակներով: Ցավոք գազամատակարարումն ապահովված է միայն Լեռնաձորում, որտեղ SS-ների 80%-ը միացված են ցանցին: Չամայնքի գյուղերը տեղակայված են Կապան-Քաջարան մայրուղու վրա եւ գազամատակարարման հիմնական խողովակը բավականին մոտ է նրանց. այսինքն՝ այս համայնքների գազամատակարարման ապահովումը համեմատաբար ավելի հեշտ եւ էժան է եղել: Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչները հետագոտական թիմին

տեղեկացրել են, որ Շիկահողի ենթաշրջանի գազաֆիկացման ծրագիրը ներկայումս պատրաստվում է եւ որպես առաջնային կարելուության ծրագիր պետք է ներկայացվի ՀՀ Կառավարությանը՝ հաստատման եւ ֆինանսավորման նպատակով:

Հետազոտված համայնքների բոլոր SS-ներն ապահովված են *էլեկտրականությամբ*, որի մատակարարման որակը բարձր է: Էլեկտրական հոսանքի անջատումներ լինում են ամսական 1-2 անգամ՝ առավելագույնը մի քանի ժամով, եթե լուրջ խնդիրներ չեն առաջանում, որոնց պարագայում անջատումները կարող են մի քանի ժամ տևել: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ էլեկտրականության մատակարարման ցանցը (հատկապես հենասյունները) որոշ վայրերում կապիտալ վերանորոգման կարիք ունեն: Այս խնդիրը մասնավորապես կարելուով է Ներքին Հանդ համայնքում, սակայն այն ընդհանրական կարող է համարվել բոլոր համայնքների համար:

Խմելու ջրի մատակարարումը կարելու խնդիր է սահմանվել հետազոտված համայնքների կեսում: Այս խնդիրը հատկապես սուր է Գեղանուշ համայնքում, որտեղ խմելու ջուր պարզապես չկա: Վարդանիճորում խմելու ջրով ապահովված են SS-ների 60%-ը, Լեռնաձորում՝ 30%-ը, Ճակատենում՝ 50%-ը: Ապահովված համայնքներում ջրամատակարարումը շուրջօրյա է, ընդհատումները հազվադեպ են՝ հիմնականում պայմանավորված վթարներով եւ այլ արտաքին պատճառներով: Ընդհատումները սովորաբար երկար չեն տևում եւ մատակարարումը սովորաբար շատ արագ վերականգնվում է: Խմելու ջրի որակը տարբեր համայնքներում տարբեր է՝ հիմնականում ընդունելի որակի: Ամենավատ որակն արձանագրվել է Սրաշենում եւ Գեղանուշում: Երբեմն մատակարարվող ջուրը կարելի է օգտագործել լավագույն դեպքում տեխնիկական եւ ոռոգման նպատակներով:

Կենցաղային աղբի հեռացման գործառույթն առկա է միայն Լեռնաձորում: SS-ներն ինքնուրույն են ապահովում աղբահեռացումը՝ տեղակայելով այն անօրինական աղբավայրերում: Կերչին տարիներին նման աղբավայրեր ձեւավորվել են բոլոր համայնքներում: Դրանցից քիչ թե շատ օրինական կարող են համարվել Լեռնաձորի եւ Սրաշենի աղբավայրերը: Աղբահանության եւ կանոնավոր գործող աղբավայրերի բացակայությունը մեծապես վտանգում է ապագա ԲՀՊՏ-ների բնապահպանական իրավիճակը եւ այս խնդիրն անհապաղ լուծման կարիք ունի: Կեղտաջրերի հեռացման կենտրոնացված համակարգեր գործում են միայն Ներքին Հանդ եւ մասնակիորեն Սրաշեն համայնքներում: Իրականում կեղտաջրերը չեն մշակվում նույնիսկ այս համայնքներում. դրանք պարզապես հեռացվում են: SS-ները սովորաբար օգտագործում են անհատական կեղտահորեր, ինչը կարող է վտանգավոր սանիտարական իրավիճակի պատճառ դառնալ:

ԲՀՊՏ հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից հատկապես կարելուով է հետազոտված համայնքներում կեղտաջրերի եւ կենցաղային թափոնների հեռացման խնդիրը: Այս խնդիրը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում համայնքներում տուրիզմի զարգացման տեսանկյունից: Որոշ համայնքներում անկանոն աղբակույտերը կուտակված են անմիջապես տեսարժան վայրերում եւ մեծապես վտանգում են շրջակա միջավայրը: Եթե կեղտաջրերի հեռացման խնդիրը խոշոր ներդրումներ պահանջող միջոցառում է, ապա աղբահեռացման գործողությունները հնարավոր է իրականացնել շատ ավելի փոքր ջանքերով: Ներգրավված կառույցներին առաջարկվում է անհապաղ ուշադրություն դարձնել համայնքներում եւ դրանց հարակից վայրերում շրջակա միջավայրի մաքրմանը եւ կանոնավոր աղբահեռացման համակարգի ներդրմանը:

2.6 ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր ձեռնարկատիրությունը հետազոտված համայնքներում զարգացած չէ: Արտադրական միավորները խիստ սակավաթիվ են, որոշ նորերը դեռեւս կառուցվում են: Ծառայությունների ոլորտը

Ներկայացված է առաջին անհրաժեշտության ապրանքներ առաջարկող առեւտրային փոքր կետերով եւ հասարակական սննդի մի քանի կետերով: Դրանց ամբողջական ցանկը ներկայացված է ստորեւ:

Աղյուսակ 20 - Մասնավոր ձեռնարկատիրությունը հետազոտված համայնքներում, 2011թ. սկզբի դրությամբ²⁰

	Վարդանիձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Յանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
ՅԷԿ		1 միավոր, կառուցվող						
Փուռ						1 միավոր, 6 աշխատող		
Կաթի մշակում		1 միավոր, չգործող						
Փայտի մշակում	1 միավոր, չգործող	1 միավոր, 1 աշխատող						
Գինու գործարան	2 միավոր, չգործող							
Քարի մշակում	3 միավոր, չգործող							
Ոսկու կորզում	1 միավոր, 11 աշխատող							
Ձկնաբուծարան	1 միավոր, 4 աշխատող							
Առեւտրի կետ	1 միավոր, 2 աշխատող	2 միավոր, 2 աշխատող	1 միավոր, 1 աշխատող	1 միավոր, 1 աշխատող		5 միավոր, 5 աշխատող	1 միավոր, 1 աշխատող	1 միավոր, 1 աշխատող
Ռեստորան / Սրճարան	1 միավոր, 2 աշխատող					1 միավոր, 3 աշխատող		1 միավոր, 3 աշխատող
Յյուրանոց / Յյուրատուն	1 միավոր, 3 աշխատող			1 միավոր, 1 աշխատող				
Վարսավիրանոց		1 միավոր, կառուցվող						

Համայնքների ներքին շուկան (պահանջարկը) շատ փոքր է, բնակչությունն անվճարունակ է, շուկաների հասանելիության մակարդակը ցածր է: Հետազոտված համայնքներում ձեռնարկատիրության ինտենսիվությունը ներկա պահին չի կարող բացասական ազդեցություն ունենալ գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի բնապահպանական իրավիճակի վրա: Բացառություն է հանդիսանում թերեւս միայն Վարդանիձոր համայնքում գործող ոսկու կորզման գործարանը, որին անհրաժեշտ է հատուկ անդրադարձ կատարել ապագայում:

Նման իրավիճակում տեղական բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը կարող է լինել գյուղատնտեսությունը: Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային եւ հյուրատնային ծառայություններ եւ այլն) լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ ուսումնասիրվող տարածքում գրեթե չկան. որոշ քայլեր կատարվում են միայն «Շիկահող» ՊԱ եւ «Սոսիների Պուրակ» արգելավայրի տարածքներում:

Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական եւ պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, քայլարշավի հնարավորություններ,

²⁰ Աղբյուր՝ Համայնքապետարաններ եւ համայնքների ներկայացուցիչներ

Եկեղեցիներ, քարանձավներ եւ այլ տեսարժան վայրեր: Ներկայումս այս հնարավորությունների մի փոքր մասն է իրացվում (հիմնականում տեղական բնակչության կողմից) եւ լուրջ բարելավման անհրաժեշտություն կա: Հետազոտված համայնքների տուրիստական պատրաստվածության հետազոտությունն իրականացվել է զուգահեռաբար եւ կներկայացվի առանձին հաշվետվությամբ:

Համայնքների շուկան չափազանց փոքր է, բնակչությունն անվճարունակ է, հիմնական շուկաները հեռու են եւ դժվար մատչելի: Նման իրավիճակում տեղական բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը կարող է լինել գյուղատնտեսությունը: Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային եւ հյուրատնային ծառայություններ եւ այլն) լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հիմնականում հասանելի չեն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական եւ պատմամշակութային բազմաթիվ հուշարժաններ, ավերակներ, քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ եւ այլ տեսարժան վայրեր: Ներկայումս այս հնարավորությունների չնչին մասն է իրացվում եւ լուրջ բարելավման անհրաժեշտություն կա: Հետազոտված համայնքների տուրիստական պատրաստվածության հետազոտությունն իրականացվել է զուգահեռաբար եւ կներկայացվի առանձին հաշվետվությամբ:

2.7 ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Սոցիալ-տնտեսական հետազոտության ժամանակ համայնքների ներկայացուցիչներին առաջարկվել է ներկայացնել իրենց բնակավայրերի հիմնական ուժեղ (դրական), թույլ (բացասական) կողմերը, ինչպես նաեւ համայնքներում առկա զարգացման հնարավորությունները երեք հիմնական առումներով՝ *բնապահպանական, տնտեսական եւ սոցիալական*: Ներկայացված պատասխանները ամփոփ ներկայացված են **առանց խմբագրման**:

Տարբեր տեղական շահառուների պատկերացումները իրենց տարածքների ուժեղ եւ թույլ կողմերի վերաբերյալ չեն վերլուծվել, համամասնություններ չեն հաշվարկվել: Պարզապես ներկայացվել են բոլոր շահառուների բոլոր պատասխանները, որպեսզի պարզ դառնա նրանց ընդհանուր տրամադրվածությունը: Առավել ամփոփ եւ գիտականորեն հիմնավորված մոտեցում է դրսևորվել իրական SWOT վերլուծության մեջ, որը ներկայացում է ավելի ուշ:

2.7.1 Բնապահպանական տեսանկյուն

2.7.1.1 *Ուժեղ կողմեր*

Հետազոտված համայնքների ներկայացուցիչների կողմից նշվել են բնապահպանական տեսանկյունից առկա հետեւյալ ուժեղ կողմերը.

- Գեղատեսիլ բնություն եւ եզակի շրջակա միջավայր,
- Մաքուր շրջակա միջավայր՝ օդ եւ գետեր,
- Կենսաբազմազանության ապրանքներով հարուստ անտառներ,
- Հանգստյան գոտի,
- Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն:

2.7.1.2 Թույլ կողմեր

Բնապահպանական տեսանկյունից հիմնական *թույլ կողմ* արձանագրվել է Գեղանուշ համայնքում: Կապանի լեռնահարստացման կոմբինատի (Deno Gold Company) արդեն 4 տարի գործող պոչամբարն իսկական աղետ է վտանգ է ներկայացնում ողջ Կապանի տարածաշրջանի համար: Նույնը վերաբերվում է նաեւ Լեռնաձոր համայնքի տարածքում գտնվող «Չանգեզուր» Պղնձամոլիբդենային Կոմբինատի երկու պոչամբարներին: Այլ թույլ կողմերի թվում հիշատակվել են նաեւ հետեւյալները.

- Աղբահեռացման եւ համապատասխան ձեւով կազմակերպված աղբավայրերի բացակայությունը,
- Ուրանի հանքավայրերի առկայությունը,
- Հայկմտառի անարդյունավետ կառավարման միջոցառումները եւ անօրինական հատումները:

2.7.1.3 Հնարավորություններ

Համայնքների ներկայացուցիչները հնարավորությունների շարքում նշել են տուրիզմի (հատկապես Էկոտուրիզմի) զարգացման պոտենցիալը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը՝ չնայած այս հնարավորությունը ճիշտ կլիներ հիշատակել ավելի շուտ տնտեսական տեսանկյունից: Այլ *հնարավորությունների* շարքում համայնքներում հիշատակվել են հետեւյալները.

- Ոչ փայտային անտառային ապրանքների կայուն օգտագործումը,
- Շիկահողի ենթաշրջանում ապագա կենսոլորտային արգելոցի ստեղծման հնարավորությունը,
- Անտառների վերականգնման եւ նոր ծառեր տնկելու հնարավորությունը:

2.7.2 Սոցիալական տեսանկյուն

2.7.2.1 Ուժեղ կողմեր

Սոցիալական տեսանկյունից հետազոտված համայնքների *ուժեղ կողմերը* շատ քիչ են:

- Աշխատուժի առկայությունը,
- Աշխատասեր բնակչություն,
- Լեռնաձոր համայնքում երիտասարդության առկայությունը եւ միգրացիայի ցածր տեմպերը,
- Սրտաբաց բնակչություն:

2.7.2.2 Թույլ կողմեր

Սոցիալական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական թույլ կողմերն են.

- Գործազրկության բարձր մակարդակը,
- Շիկահողի ենթաշրջանի համայնքներում բնակչության՝ հատկապես երիտասարդության միգրացիան,
- Ապրելու վատ պայմաններ, տների պակաս, հնացած եւ մաշված տներ, վերանորոգման դժվարություններ,
- Կենսապահովման վատ վիճակ եւ աղքատություն (բացառությամբ Լեռնաձորի որոշ մասի),
- Աղքատիկ մշակութային կյանք, միջոցառումներ չկան,
- Ծերացող բնակչություն,
- Բժշկական ծառայությունների եւ դեղերի ցածր հասանելիություն,

- Անարդյունավետ կենսաթոշակային համակարգ, ցածր թոշակներ,

2.7.3 Տնտեսական տեսանկյուն

2.7.3.1 Ուժեղ կողմեր

Տնտեսական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական ուժեղ կողմերն են.

- Ստոիկությունը դեպի Իրան տանող միջազգային մայրուղուն,
- Բերրի հողերի առկայությունը եւ հողագործության նպաստավոր պայմանները,
- Անասնապահության նպաստավոր պայմանները՝ հատկապես մեղվաբուծության համար,
- Շիկահողի ՊԱ առկայությունը նպաստում է տուրիզմի զարգացմանը,
- «Չանգեզուր» ՊՆՆձամուլիբդենային Կոմբինատի կողմից առաջարկվող զբաղվածությունը:

2.7.3.2 Թույլ կողմեր

Սոցիալական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական թույլ կողմերն են.

- Համայնքների փոքր բյուջեները,
- Գազաֆիկացման բացակայությունը,
- Թերզարգացած
- Արտաքին ֆինանսական միջոցների անմատչելիությունը՝ բարձր տոկոսներ, կարճ ժամանակահատված,
- Ոռոգման համակարգի բացակայությունը Շիկահողի ենթաշրջանում,
- Ժամանակակից գյուղատնտեսական մեխանիզացիայի սակավությունը,
- Գյուղատնտեսական հումքի եւ նյութերի ցածր հասանելիությունը,
- Վառելիքի թանկությունը:

2.7.3.3 Հնարավորություններ

Տնտեսական տեսանկյունից հետազոտված համայնքների հիմնական հնարավորություններն են.

- Բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության՝ պտղի այգիների հիմնում,
- Տուրիզմի (հատկապես Էկո-տուրիզմի) զարգացման պոտենցիալը,
- Բազմաթիվ խաչքարերի եւ պատմական հուշարձանների առկայությունը,
- Ոչ փայտային անտառային ապրանքների ավելի կայուն օգտագործում:

2.7.4 Եզրակացություն

Ակնհայտ է, որ ուժեղ եւ թույլ կողմերի վերը բերված ներկայացումը դասական SWOT վերլուծություն չի հանդիսանում: Հետազոտվողները չէին կարող գիտականորեն հետեւողական եւ ճշգրիտ պատասխաններով հանդես գալ: Չնայած դրան, ստացված պատասխանները ներկայացվել են առանց խմբագրման, ինչը թույլ կտա հստակորեն փոխանցել համայնքների ներկայացուցիչների իրենց հարազատ գյուղերի վերաբերյալ ունեցած կարծիքը, պատկերացումները, ակնկալիքները: Սա նաեւ կարելու է հետագայում տեղեկացվածության բարձրացման եւ դասընթացների իրականացման միջոցառումներ պլանավորելու տեսանկյունից:

Կարելի է ամփոփել, որ համայնքներն ավելի շատ թույլ կողմեր ունեն, քան ուժեղ: Բոլոր համայնքներում էլ կան ենթակառուցվածքների, գյուղատնտեսական հումքի, երկարաժամկետ եւ մատչելի ֆինանսավորման, շուկաների հասանելիության եւ բազմաթիվ այլ հարցերի հետ կապված խնդիրներ: Այդտեղից համայնքներում հիմնականում աղքատ է եւ շուտափույթ բարելավման կարիք ունի: Ադրբեջանի հետ սահմանի մոտիկությունն էլ ավելի է վատթարացնում իրավիճակը՝ համայնքների զարգացումը վերածելով իսկական մարտահրավերի:

Գյուղատնտեսական հողերի առկայությունը եւ բարենպաստ կլիմայական պայմանները հիմնական ուժեղ կողմն ու զարգացման հնարավորությունն են հանդիսանում: Բազմաթիվ քննարկումներ են անցկացվում ապագա կենսոլորտային արգելոցի հիմնման վերաբերյալ հատկապես Շիկահողի ենթաշրջանում: Այս գործառույթը կարող է մեծապես նպաստել տարածքում տուրիզմի եւ ընդհանրապես սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ հետեւաբար նաեւ բնապահպանական իրավիճակի բարելավմանը:

Ջետազոտված համայնքներում տուրիզմը եւ գյուղատնտեսությունը զարգացման հիմնական հնարավորություններն են հանդիսանում՝ չհաշված լեռնահանքային արդյունաբերությունը: Դրա պոտենցիալն առկա է եւ շուկայական իրավիճակն էլ՝ խոստումնալից: Ցավոք տեղական բնակչությունը մասնակիորեն է համաձայն այս պնդմանը: Համայնքների համար ամբողջացված SWOT վերլուծության պատկերը ներկայացված է հաջորդիվ:

2.7.5 Ամբողջական SWOT վերլուծություն

2.7.5.1 Ուժեղ կողմեր

Ջետազոտված համայնքների ուժեղ կողմերի թվում նշվել են ԲՀՊՏ-ների զարգացման Ծրագրի տեսանկյունից ներքին այն գործոնները, որոնք ապագա ԲՀՊՏ-ների համար զարգացման եւ մրցակցային առավելությունների լուրջ նախադրյալներ են հանդիսանում: Մասնավորապես ուժեղ կողմերից են.

- Տվյալ տարածքում ԲՀՊՏ հիմնելու վերաբերյալ ՀՀ Կառավարության եւ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ընդունված որոշման առկայությունը,
- ԲՀՊՏ-ների զարգացմանը ներգրավված կազմակերպությունների փորձառությունը,
- ԲՀՊՏ համայնքներում մարդկային ռեսուրսների առկայությունը,
- ԲՀՊՏ համայնքներում բարձրարժեք գյուղատնտեսություն ծավալելու փորձը,
- Մշակութային կանոնավոր եւ միջազգային ճանաչում ունեցող միջոցառումների կազմակերպման եւ հաջող իրականացման փորձը:

2.7.5.2 Թույլ կողմեր

Ջետազոտված համայնքների թույլ կողմերի թվում նշվել են այն գործոնները, որոնք ապագա ԲՀՊՏ-ների համար կարող են զարգացման լուրջ խոչընդոտ հանդիսանալ: Մասնավորապես թույլ կողմերից են.

- Բնակչության բացասական վերաբերմունքը ԲՀՊՏ-ների նկատմամբ,
- Բնակչության ծերացման միտումները, երիտասարդների միգրացիան,
- Գյուղատնտեսական ենթակառուցվածքների թույլ վիճակը,

- Սոցիալական ենթակառուցվածքների թույլ վիճակը եւ բացակայությունը,
- Համայնքներում բնակչության եկամուտների ցածր մակարդակը, աղքատությունը,
- Համայնքներում բնակչության վատ կենսապայմանները:

2.7.5.3 Հնարավորություններ

Հնարավորությունների ներքո նշվել են արտաքին այն գործոնները, որոնց հետագա անդրադարձը եւ կիրարկումը թույլ է տալիս դրանք վերածել ԲՀՊՏ-ների զարգացման տեսանկյունից ուժեղ կողմերի: Մասնավորապես.

- Եզակի գեղատեսիլ բնությունը եւ մաքուր օդը,
- Մեծ քանակությամբ բնական, պատմամշակութային, գիտական եւ այլ հուշարձանների առկայությունը,
- Բարձրարժեք գյուղատնտեսության զարգացման համար հարմար լանդշաֆտային եւ կլիմայական պայմանները,
- Հետաքրքիր հանգստի եւ առողջության վերականգնման համար հարմար բնական պայմանների առկայությունը, փափուկ կլիման
- Տուրիզմի բազմաթիվ տեսակների՝ ագրոտուրիզմի, պատմամշակութային տուրիզմի, էթնիկ տուրիզմի, քայլարշավների եւ ճամբարների կազմակերպման, քարանձավային տուրիզմի, հանգստի եւ առողջության վերականգնման եւ այլ հնարավորություններ:

2.7.5.4 Վտանգներ

Վտանգների ներքո նշվել են արտաքին այն գործոնները, որոնց հետագա անդրադարձը եւ կիրարկումը կարող է լուրջ կասկածի տակ դնել ԲՀՊՏ-ների զարգացումը Սյունիքի մարզում: Մասնավորապես.

- Աղբբեջանի հետ սահմանամերձ լինելը,
- Լեռնահանքային արդյունաբերության անկանոն զարգացումը, բնական հանքային ռեսուրսների անկայուն շահագործումը,
- Օդի, ջրերի եւ հողերի աղտոտվածության բարձր մակարդակը, թունավոր պոչամբարների առկայությունը պահպանվող տարածքների հարակից վայրերում:

2.8 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲՀՊՏ-ՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԲՀՊՏ-ների հիմնման եւ ընդլայնման վերաբերյալ շահառուների վերլուծության առաջադրանքի ներքո համայնքների սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացումն ինքնանպատակ միջոցառում չէ: Այն երկակի կարեւորության գործողություն է, որը նպատակ ունի ա) պարզաբանել եւ հստակ սահմանել կոնկրետ տարածքում ԲՀՊՏ-ների ընդլայնման (հիմնադրման) նախնական հիմքերը եւ բ) գնահատել, թե ԲՀՊՏ-ների զարգացումն ինչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հաշվետվության առանձին բաժիններում այս խնդիրներին անդրադարձ արդեն իսկ կատարվել է: Ստորեւ ներկայացված են ամփոփ եզրակացությունները:

2.8.1 Տեղական ինքնակառավարում եւ ֆինանսներ

Հարակից համայնքների ղեկավարները կարելու ռազմավարական դեր կարող են ունենալ ԲՀՊՏ-ների զարգացման տեսանկյունից: Ակնհայտ է, որ նրանց օժանդակությունը այս խնդրում միանշանակ նախապայման է հանդիսանում ԲՀՊՏ-ների կայացման համար: Հետազոտված համայնքների մեծ մասի ղեկավարները պաշտոնավարում են արդեն բավականին երկար եւ լավ տեղյակ են իրենց համայնքների խնդիրներին: Միայն այս խնդիրների արմատական լուծման պարագայում հնարավոր կլինի ապահովել ԲՀՊՏ-ների կայուն զարգացումը, ինչը նշանակում է, որ Ծրագրի համագործակցությունը համայնքապետերի եւ ընդհանրապես տեղական բնակչության հետ այլընտրանք չունի:

ԲՀՊՏ-ների ստեղծման եւ մասնավորապես Էկոտուրիզմի զարգացման առումներով անհրաժեշտ է սերտ համագործակցություն ծավալել պետական կառույցների եւ զարգացման ֆինանսավորում իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ միտված համայնքների ընդհանուր եւ ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի իրականացմանը: Սեփական ռեսուրսներով հետազոտված համայնքները պարզապես ի վիճակի չեն (եւ մոտ ապագայում չեն լինի) վերականգնել ԲՀՊՏ-ների զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Միաժամանակ, ԲՀՊՏ-ների զարգացումը եւ կայացումը մի գործընթաց է, որն իր հերթին կարող է մեծապես նպաստել համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանը: Սա պայմանավորված է հատկապես ԲՀՊՏ-ների նկատմամբ տեղական եւ միջազգային կառույցների ուշադրությամբ եւ (հիմնականում միջազգային կառույցների պարագայում) ֆինանսավորման պատրաստակամությամբ: Այս գաղափարն անհրաժեշտ է հասցնել համայնքների հասարակության գիտակցությանը եւ ներգրավել նրանց գործընթացի մեջ:

2.8.2 Հողօգտագործում

ԲՀՊՏ-ների հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի հողերի գյուղատնտեսական օգտագործումը: ԲՀՊՏ-ները ըստ սահմանման պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ եւ համայնքներում պետք է ապահովվեն եկամուտների գներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները եւ եղանակները համայնքներում արդյունավետ չեն: ԲՀՊՏ-ների հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման համակարգերի վերականգնման եւ այլ առումներով:

2.8.3 Ժողովրդագրական իրավիճակ

ԲՀՊՏ հիմնման գործընթացն ակնկալում է մարդկային ռեսուրսների առկայություն կոնկրետ տարածքներում: Հետազոտված համայնքներում առկա մարդկային եւ աշխատանքային ռեսուրսները (բնակչության թվաքանակը, սեռատարիքային բաշխվածքը, կրթական մակարդակը եւ այլն) բավարար են ԲՀՊՏ-ների զարգացման տեսանկյունից՝ չնայած որոշ դժվարություններ արդեն իսկ կարող են կանխատեսվել: Մյուս կողմից՝ ԲՀՊՏ-ների զարգացման արդյունքում տեղական

բնակչությունը հնարավորություն կստանա նոր որակներ եւ ունակություններ ձեւավորել, նոր տեսակի ծառայություններ ձեւավորել եւ մատուցել, որոնք ներկայումս դեռեւս սաղմնային վիճակի մեջ են գտնվում: Այս առումով մեծ աշխատանք ունեն անելու նաեւ ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ներգրավված կազմակերպությունները: Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության եւ վստահության բարձրացման, կրթական եւ վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

2.8.4 Սոցիալական ծառայություններ եւ ենթակառուցվածքներ

Սոցիալական ծառայությունների եւ ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է նախ եւ առաջ համայնքների կայուն զարգացման առումով: Միաժամանակ՝ դա ԲՀՊՏ-ների կայացման նախապայման է հանդիսանում: Ներկայիս իրավիճակում նախադրյալները դեռեւս կատարյալ չեն. համայնքային եւ միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ եւ կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային եւ էթնոտուրիզմի ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան եւ այլն:

Կրկին ականատես ենք երկակի իրավիճակի՝ ԲՀՊՏ-ների կայացման համար անհրաժեշտ է անհապաղ եւ մեծածավալ ներդրումներ իրականացնել սոցիալական ծառայությունների ստեղծման եւ համայնքային ենթակառուցվածքների վերականգնման համար: Միաժամանակ, ԲՀՊՏ-ների աշխատանքը մեծապես կնպաստի այդ ծառայությունների վերջնական կայացմանը եւ ենթակառուցվածքների հետագա կայուն զարգացմանը:

2.8.5 Աղքատություն

Չետագուտված համայնքներում բնակչության 85%-ից ավելին ներկա պահին աղքատ է, ինչը լրջագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ ԲՀՊՏ-ների ստեղծման եւ ընդլայնման համար: ԲՀՊՏ-ները պետք է մոդելային կայուն զարգացման լավագույն օրինակ հանդիսանան բնապահպանական երկարաժամկետ նպատակներ հետապնդելու համար: Այս առումով համայնքների զարգացումը լրջագույն մարտահրավեր է՝ ծառացած ինչպես ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ուղղակիորեն ներգրավված կառույցների, այնպես էլ ՀՀ Կառավարության եւ միջազգային կազմակերպությունների առջև: Կոնկրետ եւ մեծածավալ միջոցառումներ պետք է իրականացվեն համայնքներում աշխատատեղերի ստեղծման եւ լրացուցիչ եկամուտների գեներացման ուղղությամբ, այլապես ԲՀՊՏ-ների գործարկումը երկարաժամկետ կտրվածքով կդառնա անհնար:

2.8.6 Գյուղատնտեսություն

Տնտեսական կայուն զարգացումը ԲՀՊՏ-ներին հարակից համայնքներում դրանց կայացման հիմնական գրավականներից է: Միայն բարեկեցիկ կենսապայմաններում ապրող եւ կայուն եկամուտներ ունեցող բնակչությունը կարող է իսկապես արժեւորել առկա բնական պայմանները: Գյուղատնտեսության զարգացումը հետազոտված համայնքներում բնակչության եկամուտների բարձրացման հիմնական հնարավորություններից է: Կարելի է առանձնացնել գյուղատնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ապահովում են բարձրարժեք եւ առելտրայնության բարձր մակարդակ ունեցող մթերքների արտադրություն: Նման ապրանքների շարքում կարելի է թվարկել կարտոֆիլը, մերձարեւադարձային մրգատեսակները, ընկույզը, հատապտուղները, միսը եւ մեղրը:

Համապատասխան մասնագիտական եւ ֆինանսական աջակցության պարագայում տեղական բնակչությունն ի վիճակի է բազմապատկել գյուղատնտեսական գործունեության ծավալները: Առեւտրայնության բարձր մակարդակը այս արտադրանքի իրացման երաշխիք է հանդիսանում, ինչն ուղղակիորեն կնպաստի բնակչության եկամուտների աճին:

Գյուղատնտեսության զարգացումը լուրջ ներդրում կարող է ունենալ նաեւ տուրիզմի զարգացման տեսանկյունից: Նախ – առաջ, այն թույլ կտա տուրիստներին առաջարկել թարմ եւ էկոլոգիապես մաքուր սնունդ: Միեւնույն ժամանակ գյուղատնտեսության հիմքի վրա կարելի է մշակել հատուկ ագրոտուրիստական ծառայություններ, որոնք ներկայումս բավականին պահանջված են հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում:

Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնների շարքում համայնքները նշել են ոռոգման անբավարար մակարդակը, գյուղատնտեսական հումքի (բարձրորակ սերմերի, պարարտանյութերի եւ թունաքիմիկատների) ցածր հասանելիությունը, վառելիքի թանկությունը, գյուղատնտեսական մեխանիզացիայի անբավարար մակարդակը, մեքենաների վարձակալության բարձր վճարները, կոնկրետ տարածքների գերօգտագործումը:

Միեւնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինտենսիվ գյուղատնտեսության վարումը որոշակի առումով հակասում է ԲՀՊՏ-ների զարգացման դրույթներին: Սա նշանակում է, որ գործընթացում ներգրավված կառույցները պետք է որոշակի վերահսկողություն իրականացնեն հատկապես հողերի մեխանիզացված մշակման, թունաքիմիկատների եւ պարարտանյութերի օգտագործման, տնային կենդանիների արածեցման եւ այլ գործողությունների նկատմամբ:

2.8.7 Սանիտարական վիճակ

ԲՀՊՏ հիմնման եւ ընդլայնման տեսանկյունից հատկապես կար-որվում է հետազոտված համայնքներում կեղտաջրերի եւ կենցաղային թափոնների հեռացման խնդիրը: Այս խնդիրը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում համայնքներում տուրիզմի զարգացման տեսանկյունից: Որոշ համայնքներում անկանոն աղբակույտերը կուտակված են անմիջապես տեսարժան վայրերում եւ մեծապես վտանգում են շրջակա միջավայրը: Եթե կեղտաջրերի հեռացման խնդիրը խոշոր ներդրումներ պահանջող միջոցառում է, ապա աղբահեռացման գործողությունները հնարավոր է իրականացնել շատ ավելի փոքր ջանքերով: Ներգրավված կառույցներին առաջարկվում է անհապաղ ուշադրություն դարձնել համայնքներում եւ դրանց հարակից վայրերում շրջակա միջավայրի մաքրմանը եւ կանոնավոր աղբահեռացման համակարգի ներդրմանը:

2.8.8 Տուրիստական ներուժ

Համայնքների շուկան չափազանց փոքր է, բնակչությունն անվճարունակ է, հիմնական շուկաները հեռու են եւ դժվար մատչելի: Նման իրավիճակում տեղական բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը կարող է լինել գյուղատնտեսությունը: Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային եւ հյուրատնային ծառայություններ եւ այլն) լրացուցիչ լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հիմնականում հասանելի չեն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական եւ պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ եւ այլ տեսարժան վայրեր: Ներկայումս այս հնարավորությունների չնչին մասն է իրացվում եւ լուրջ բարելավման անհրաժեշտություն կա:

Չետազոտված համայնքների տուրիստական պատրաստվածության հետազոտությունն
իրականացվել է զուգահեռաբար եւ կներկայացվի առանձին հաշվետվությամբ:

3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուլստուփ» արգելավայրերի համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազա

Գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «Խուլստուփ» արգելավայրերին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական տվյալների բազաները Վարդանիձոր, Ծավ, Ներքին Հանդ, Սրաշեն, Շիկահող, Ճակատեն, Գեղաշեն եւ Լեռնաձոր համայնքների համար հասանելի են հետեւյալ հասցեներով.

[SED-Syunik\SED Chakaten.docx](#)

[SED-Syunik\SED Gexanush.docx](#)

[SED-Syunik\SED Lernadzor.docx](#)

[SED-Syunik\SED Nerkin Hand.docx](#)

[SED-Syunik\SED Shikahogh.docx](#)

[SED-Syunik\SED Srashen.docx](#)

[SED-Syunik\SED Tsav.docx](#)

[SED-Syunik\SED Vardanidzor.docx](#)